



| | |
|---|--|
| Համարը N 534-Ն Տիպը Որոշում Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2014.06.04/29(1042).1 Հոդ. 446.3 Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 14.06.2014 | Տեսակը Մայր Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Երևան Ընդունման ամսաթիվը 17.04.2014 Ստորագրման ամսաթիվը 23.05.2014 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը |
|---|--|

☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2014 թվականի N 534-Ն

«ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 10-րդ կետերի, 6-րդ հոդվածի 5-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին մասի, 5-րդ մասի 6-րդ կետի, 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 6-րդ և 8-րդ կետերի, 20-րդ հոդվածի 12-րդ մասի 2-րդ, 5-րդ կետերի և 15-րդ մասի, 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերի և 4-րդ մասի, 22-րդ հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերի, 24-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝
 - 1) աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) հարմար աշխատանքի պայմանները բնութագրող չափանիշները՝ համաձայն N 2 հավելվածի.
 - 3) աշխատանք փնտրող անձի հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման կարգն ու ժամկետները, աշխատանք փնտրող անձի հաշվառման և հաշվառումից հանելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.
 - 4) զբաղվածության պետական գործակալություն գործազուրկի չներկայանալու հարգելի

պատճառների ցանկը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) աշխատաշուկայի իրավիճակի մասին տեղեկատվության հասանելիության ապահովման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի տեղաբաշխման կարգն ու չափանիշները՝ ըստ մարզերի, Երևան քաղաքի և աշխատանք փնտրող անձանց առանձին խմբերի (շահառուների)՝ համաձայն N 6 հավելվածի.

7) աշխատանքի տոնավաճառի կազմակերպման կարգը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման կարգը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) գործատուների հետ համագործակցության կարգը, գործատուների մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, աշխատատեղերի հնարավոր կրճատումների մասին տեղեկությունների տրամադրման ձևն ու եղանակը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) գործատուի կողմից ներկայացված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերը համալրելու նպատակով աշխատանք փնտրող անձին տրամադրվող ուղեգրի ձևը՝ համաձայն N 10 հավելվածի.

11) գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման կարգը՝ համաձայն N 11 հավելվածի.

12) ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 12 հավելվածի.

13) գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 13 հավելվածի.

14) աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման կարգը՝ համաձայն N 14 հավելվածի.

15) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրման կարգը՝ համաձայն N 15 հավելվածի.

16) աշխատաշուկայում անմրցունակ անձանց ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 16 հավելվածի.

17) աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 17 հավելվածի.

18) աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման կարգը՝ համաձայն N 18 հավելվածի.

19) սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 19 հավելվածի.

20) տեղեկատվական շտեմարանի ներդրման, վարման և շահագործման կարգը՝ համաձայն N 20 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկամսյա ժամկետում հաստատել աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման հարցաթերթիկի ձևը, աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման մասին ամփոփ եզրակացության օրինակելի ձևը, աշխատանք փնտրող

անձի անհատական ծրագրի օրինակելի ձևը, Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության հիմնական ցուցանիշների ամսական և տարեկան վարչական վիճակագրական հաշվետվության ձևերը, զբաղվածության պետական ծրագրերի ֆինանսավորման հայտ-պահանջագրերի ձևերը, առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղի հայտի օրինակելի ձևը, զբաղվածության պետական ծրագրերի իրականացման նպատակով կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը, լիազորված մարմնի և աշխատանք փնտրող անձի միջև անհատական ծրագրի իրականացման վերաբերյալ երկկողմ պայմանագրի օրինակելի ձևը, փոխհատուցման հավաստագրի ձևը, գյուղացիական տնտեսության աջակցության պայմանագրի օրինակելի ձևը, մասնագիտական ուսուցման ուղեգրի և հայտի ձևերը, ըստ մասնագիտությունների աշխատավարձի հավելման չափերը, գործատուների գրանցամատյանի ձևաչափը, տվյալ ամսվա ընթացքում գործատուի մոտ աշխատող անմրցունակ անձանց մասին գործատուի կողմից տարածքային կենտրոն ներկայացվող տեղեկանքի ձևը, հող օգտագործողներին աջակցության գործարար ծրագրի և աշխատանքների կատարման պլան-ժամանակացույցի ձևերը, աշխատանք փնտրող անձանց համար իրականացվող յուրաքանչյուր զբաղվածության պետական ծրագրի համար նախատեսված չափանիշների կշիռները.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկամսյա ժամկետում հաստատել աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության և աշխատանքի տեղավորման նպատակով իրեն դիմած անձի միջև կնքվող աշխատանքի տեղավորման ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը.

3) մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը բաշխել Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցներն ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզում աշխատանք փնտրող անձանց թիվը, գործազրկության մակարդակը, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների թիվը, մարզպետարաններից ստացված ծրագրերի հայտ-առաջարկները, չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը.

4) մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը ապահովել օրենքով սահմանված տեղեկատվական շտեմարանի ինտերնետային մոդուլի ներդրումը և գործարկումը:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում հաստատել Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման զբաղվածության պետական ծրագրի համատեղ կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման աշխատանքների չափաքանակները՝ ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի:

4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և առաջարկել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՓՄՁ ԶԱԿ) տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկամսյա ժամկետում ստորագրել Աշխատաշուկայում անմրցունակ անձանց ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության զբաղվածության պետական ծրագրի համատեղ կազմակերպման և իրականացման

համար անհրաժեշտ համագործակցության պայմանագիր՝ հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետի 16-րդ ենթակետով հաստատված կարգի դրույթները:

5. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝

1) աջակցել ծրագրի կազմակերպման և իրականացման աշխատանքներին.

2) մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը՝

ա. գյուղական համայնքների ղեկավարներից ստանալ ծրագրում ընդգրկման ենթակա հող օգտագործողների վերաբերյալ առաջարկությունները՝ համապատասխան համայնքի ղեկավարի պատշաճ հիմնավորմամբ,

բ. հաստատել ծրագրում ընդգրկման ենթակա հող օգտագործողների ցուցակները՝ նշելով գյուղական համայնքի անվանումը, հող օգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի կամ նույնականացման քարտի համարը, տարիքը, փաստացի բնակության վայրը, ընտանիքի 16-63 տարեկան գործունակ անդամների թիվը, ընտանիքի անչափահաս երեխաների թիվը, ընտանիքի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը՝ հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 3-րդ կետով նախատեսված՝ ծրագրում ընդգրկման առաջնահերթությունները,

գ. սույն կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված հող օգտագործողների ցուցակները ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին.

3) ապահովել սույն կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված հող օգտագործողների ցուցակների պարտադիր փակցնելը բնակչության համար առավել տեսանելի վայրերում՝ ներառյալ գյուղապետարանի վարչական շենքը:

6. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության ծախսային ծրագրով նախատեսված միջոցների 1,5 տոկոսն ուղղել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրի ուղեկցման աշխատանքների ֆինանսավորմանը (որի 0,75 տոկոսը հատկացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերմանը, իսկ 0,75 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ էներգետիկ և կապի ծառայությունների, ներքին գործուղումների, տրանսպորտային նյութերի, գրասենյակային նյութերի համար):

7. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի Աշխատաշուկայում անմրցունակ անձանց ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության ծախսային ծրագրով նախատեսվող միջոցների հաշվին 2015 թվականից ՓՄՁ ԶԱԿ-ին ծրագրի յուրաքանչյուր շահառուի համար հատկացնել հիսուն հազար դրամ՝ ծրագրի շրջանակներում ակնկալվող ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցության նպատակով (խորհրդատվություն, ուսուցում և գործարար ծրագրի մշակում): Ընդ որում, ՓՄՁ ԶԱԿ-ին սույն կետում նշված հատկացումը կատարվում է ծրագրի այն շահառուների համար, որոնք ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող Սկսնակ գործարարներին աջակցության ծրագրի շրջանակներից դուրս են ստանում համապատասխան աջակցությունը:

8. Սահմանել, որ մինչև 2014 թվականի հունվարի 1-ը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության

պետական գործակալության տարածքային կենտրոններում հաշվառված՝ աշխատանք փնտրող զբաղված և աշխատանք փնտրող չզբաղված անձանց կարգավիճակները, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ ենթակա են համապատասխանեցման օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված կարգավիճակներին, բացառությամբ մինչև օրենքն ուժի մեջ մտնելը զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում հաշվառված այն անձանց, որոնց օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով գործազուրկի կարգավիճակ տալու համար անհրաժեշտ փաստաթղթերը չեն ստացվել օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից հետո:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Հ. Աբրահամյան

2014 թ. մայիսի 23
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման, աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման մասին ամփոփ եզրակացությունում ներառվելիք տեղեկությունների ցանկի հետ կապված հարաբերությունները, սահմանվում են աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման համար անհրաժեշտ հիմքերը:

2. Աշխատանք փնտրող անձի կարիքների (այսուհետ՝ աշխատանքային կարիք) գնահատումն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում նրա փաստացի բնակության վայրն սպասարկող՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնը (այսուհետ՝ տարածքային կենտրոն):

3. Աշխատանքային կարիքների գնահատման նպատակն աշխատանք փնտրող անձին «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված հարմար աշխատանքի տեղավորմանը նպաստելն է և այդ ճանապարհով կայուն զբաղվածությունն ապահովելն է:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԻՄՔԵՐԸ

4. Աշխատանքային կարիքների գնահատումը սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան աշխատանք փնտրող անձի կողմից որոշակի աշխատանք կատարելու հնարավորությունների որոշումն է:

5. Աշխատանքային կարիքների գնահատումն իրականացվում է հիմք ընդունելով «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անմրցունակության որոշարկման չափանիշները, աշխատանք փնտրող անձի ցանկությունները և սույն կարգի 6-րդ կետով սահմանված տեղեկատվության համապարփակ վերլուծության արդյունքում բացահայտված՝ աշխատանք փնտրող անձի օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորությունները՝ աշխատաշուկայի իրավիճակին համապատասխան:

6. Աշխատանքային կարիքների գնահատումն իրականացվում է՝ հաշվի առնելով աշխատանք փնտրող անձի՝

1) սեռը, տարիքը, ամուսնական կարգավիճակը, բնակավայրի տիպը (քաղաքային, գյուղական, սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային)։

2) աշխատանքային ցանկությունները և հետաքրքրությունները (նախընտրելի աշխատանքի մասին պատկերացումները), այդ թվում՝ որոշակի մասնագիտությամբ կամ որակավորմամբ, որոշակի ոլորտում, որոշակի աշխատավարձով, բնակության վայրից որոշակի հեռավորության վրա, տրանսպորտային մատչելիությանը վերաբերող որոշակի պահանջների բավարարմամբ, որոշակի աշխատանքային պայմաններով, որոշակի բնույթի աշխատանք ունենալու ցանկությունը, որոշակի աշխատանքների կատարման համար հոգեֆիզիոլոգիական հակվածությունը, նոր մասնագիտություն և հմտություններ ստանալու, որակավորումը բարձրացնելու պատրաստակամությունը։

3) որոշակի աշխատանք կատարելու օբյեկտիվ հնարավորությունները (կրթությունը, մասնագիտությունը, որակավորումը, աշխատանքային ստաժը, այդ թվում՝ հատուկ կամ մասնագիտական աշխատանքային փորձը)։

4) հաշմանդամություն ունենալու հանգամանքը, հաշմանդամության խումբը, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության և ինքնասպասարկման ապահովման ունակության սահմանափակման աստիճանը (այդ թվում՝ ուղեկցողի անհրաժեշտությունը), վերականգնողական անհատական ծրագիրը։

5) սոցիալական կարգավիճակը՝ սոցիալապես անապահով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված լինելը, ազատագրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից վերադառնալը, արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում հաշվառված և դադարի (ռեմիսիայի) շրջանում գտնվելը, թրաֆիքինգի զոհ հանդիսանալու հանգամանքը։

6) գործազուրկի կարգավիճակում գտնվելու ժամանակահատվածը, դրա տևողությունը։

7) արտագնա աշխատանքի մեկնելու ոիսկը։

8) փախստական լինելու հանգամանքը։

9) առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելու հանգամանքը։

10) անձի աշխատանք գտնելու կամ մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու հնարավորությունները՝ ելնելով այդ անձի՝ ունեցած մասնագիտությամբ (որակավորմամբ)

աշխատանքային ստաժից, աշխատանքային փորձից, աշխատանք փնտրելու ակտիվությունից և աշխատաշուկայում համապատասխան պահանջարկի առկայությունից.

11) մինչև երեք տարեկան երեխա խնամելու հանգամանքը.

12) ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում լիազորված մարմնում հաշվառվելու հանգամանքը:

7. Տարածքային կենտրոնի կողմից աշխատանքային կարիքների գնահատման նպատակով աշխատանք փնտրող անձը լրացնում է աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման հարցաթերթիկ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով հաստատված ձևին համապատասխան:

III. ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՃԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

8. Տարածքային կենտրոնն ուսումնասիրելով և վերլուծելով սույն կարգի 7-րդ կետում նշված հարցաթերթիկում ներառված տեղեկատվությունը, դրանք համադրելով նախարարության կողմից ձևավորված և վարվող տեղեկատվական շտեմարանում տվյալ անձի մասին առկա տվյալների և փաստաթղթերի հետ, հարցաթերթիկը լրացվելուց հետո չորս աշխատանքային օրվա ընթացքում կազմում է աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման մասին ամփոփ եզրակացություն: Այն դեպքում, երբ տեղեկատվական շտեմարանում առկա չեն աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման մասին ամփոփ եզրակացության կազմման համար անհրաժեշտ որոշակի տվյալներ, ապա տարածքային կենտրոնը դրանք ստանում է գրավոր հարցման կամ առցանց՝ էլեկտրոնային եղանակով վարվող տեղեկատվական բազաների միջոցով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, և եզրակացությունը կազմում է հարցման պատասխանն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հաստատած օրինակելի ձևին համապատասխան:

9. Աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման մասին ամփոփ եզրակացությունն օգտագործվում է աշխատանք փնտրող անձի զբաղվածության ապահովման անհատական ծրագրում (այսուհետ՝ անհատական ծրագիր) աջակցության թիրախները և դրանց հասնելու համար համապատասխան միջոցառումները նախանշելու համար:

10. Աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման մասին ամփոփ եզրակացությունը կցվում է անհատական ծրագրին և համարվում է դրա անբաժանելի մասը:

11. Աշխատանք փնտրող անձի անհատական ծրագրում աջակցության թիրախները, դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները, այդ թվում՝ զբաղվածության պետական համապատասխան ծրագրերում աշխատանք փնտրող անձի ներգրավման մասին առաջարկությունները, ինչպես նաև ուղեկցող ունենալու անհրաժեշտությունը նշվում են՝ հաշվի առնելով աշխատանքային կարիքների գնահատումը:

12. Սույն կարգի 6-րդ կետում նշված տեղեկատվության և (կամ) հանգամանքների փոփոխության դեպքում տարածքային կենտրոնը վերանայում է աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման մասին ամփոփ եզրակացությունը՝ համապատասխան փոփոխությունները հաստատող տեղեկատվությունն ստացվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

13. Սույն կարգի 12-րդ կետում նշված տեղեկատվության փոփոխության մասին տեղեկատվությունը կարող է ստացվել աշխատանք փնտրող անձի գրավոր հայտարարությամբ, ինչպես նաև տեղեկատվական շտեմարանում կատարված փոփոխությունների արդյունքում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

ՀԱՐՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Սույն չափանիշներով սահմանվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում (այսուհետ՝ տարածքային կենտրոն) հաշվառված անձին առաջարկվող հարմար աշխատանքի պայմանները բնութագրող, այդ թվում՝ առաջարկվող աշխատանքի վայրի տրանսպորտային մատչելիության չափանիշները:

2. Տարածքային կենտրոնում հաշվառված աշխատանք փնտրող անձին տարածքային կենտրոնի կողմից առաջարկվող հարմար աշխատանքի վարձատրության չափանիշները սահմանվում են՝ հաշվի առնելով հետևյալը՝

1) «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի մեկուկես չափը գերազանցող վարձատրություն՝ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դեպքերում՝ մասնագիտական կրթություն և որակավորում ունեցող, այդ մասնագիտությամբ (որակավորմամբ) առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ ունեցող անձանց համար, ինչպես նաև այն անձի համար, ով անցել է մինչև վեց ամիս ժամկետով՝ տարածքային կենտրոնի կողմից կազմակերպված մասնագիտական կամ վարպետային ուսուցում.

2) «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով վարձատրություն՝ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված՝ մասնագիտական կրթություն և որակավորում չունեցող անձանց համար:

3. «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դեպքերում՝ մասնագիտական կրթություն և որակավորում ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական կրթության և որակավորման համապատասխանությունը որոշվում է հիմք ընդունելով՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի կողմից հաստատված աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների՝ Հայաստանի Հանրապետության դասակարգիչը.

2) համապատասխան մասնագիտական կրթություն և որակավորում ունենալու մասին կրթական հաստատության կողմից տրված վկայականը:

4. «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված տարածքային կենտրոնում հաշվառված աշխատանք փնտրող անձին տարածքային կենտրոնի կողմից առաջարկվող աշխատանքը հարմար է համարվում, եթե՝

1) այդ աշխատանքը բավարարում է սույն չափանիշների 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պայմանները.

2) այդ աշխատանքի վայրը գտնվում է աշխատանք փնտրող անձի բնակության միևնույն համայնքի կամ տվյալ համայնքից մինչև տասը կիլոմետր հեռավորության վրա գտնվող այլ համայնքի տարածքում, որտեղ մեկնելու և վերադառնալու համար անձը կարող է օգտվել մեկ տրանսպորտային միջոցից (բացառությամբ տաքսի ծառայության):

5. Հաշմանդամություն ունեցող անձին տարածքային կենտրոնի կողմից առաջարկվող աշխատանքը հարմար է համարվում, եթե այդ աշխատանքը բավարարում է սույն կարգի 4-րդ կետով սահմանված պայմանները՝ հաշվի առնելով վերականգնողական անհատական ծրագրում նշված, հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության և ինքնասպասարկման ապահովման ունակության սահմանափակման աստիճանը (այդ թվում՝ ուղեկցողի անհրաժեշտությունը):

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

**ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ,
ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են աշխատանք փնտրող անձի հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի, այդ փաստաթղթերի ներկայացման, աշխատանք փնտրող անձի հաշվառման և հաշվառումից հանելու հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատանք փնտրող անձի հաշվառումը և հաշվառումից հանելն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում նրա փաստացի բնակության վայրն սպասարկող՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնը (այսուհետ՝ տարածքային կենտրոն):

II. ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԻՆ ՀԱՇՎԱՌԵԼԸ

3. Տարածքային կենտրոնում հաշվառվելու համար, բացառությամբ սույն կարգի 14-րդ կետով

սահմանված դեպքի, աշխատանք փնտրող անձը ներկայացնում է՝

1) անձնագիր կամ նույնականացման քարտ.

2) նույնականացման քարտ չունենալու դեպքում՝ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տեղեկանքի տեսքով հատկացված հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանք, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության քարտ.

3) կրթությունը, մասնագիտական որակավորումը հավաստող համապատասխան փաստաթղթեր՝ դրանց առկայության դեպքում.

4) աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային գործունեության մասին տեղեկությունները հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ, եթե աշխատանք փնտրող անձը գործատուների հետ գտնվել է կամ գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ.

5) զինվորական գրքույկ՝ զինված ուժերում և այլ զորքերում կամավոր (պայմանագրային) հիմունքներով զինվորական ծառայություն անցած կամ անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ կամ համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած) զինծառայողները, իսկ ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն անցած անձինք՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո 6 ամսվա ընթացքում տարածքային կենտրոն դիմելու դեպքում.

6) հետադարձ ծանուցման հասցեն և իր հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ (հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն):

4. Աշխատանք փնտրող անձը տարածքային կենտրոնում հաշվառվելու համար ներկայացնում է սույն կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերի բնօրինակները:

5. Հաշմանդամություն ունեցող՝ աշխատանք փնտրող անձը, սույն կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերից բացի, տարածքային կենտրոն է ներկայացնում նաև նախարարության աշխատակազմի բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմնի կողմից տրված վերականգնողական անհատական ծրագիրը: Ընդ որում, վերականգնողական անհատական ծրագրի ներկայացումը չի պահանջվում, եթե այն բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով ուղարկվել է համալիր սոցիալական ծառայությունների տարածքային այն կենտրոն, որում տեղակայված է հաշմանդամություն ունեցող՝ աշխատանք փնտրող անձի փաստացի բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոնը:

6. Այն դեպքում, երբ աշխատանք փնտրող անձը Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա սույն կարգի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված փաստաթղթերի փոխարեն կարող է ներկայացնել օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթը (կացության քարտը), իսկ փախստականի կարգավիճակ ունեցող անձը՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը:

7. Աշխատանք փնտրող անձի հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային ձևով՝ նախարարության կողմից ձևավորված և վարվող տեղեկատվական շտեմարանում համապատասխան տեղեկատվությունը մուտքագրելու, ներկայացված փաստաթղթերն էլեկտրոնային պատկերատպման (սքանավորում) ենթարկելու և դրանք տեղեկատվական շտեմարանում ներբեռնելու միջոցով:

8. Աշխատանք փնտրող անձին հաշվառելու նպատակով անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային կենտրոնի կողմից ստանալու օր է համարվում սույն կարգով նախատեսված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տարածքային կենտրոն ներկայացնելու օրը: Այն դեպքում, երբ աշխատանք փնտրող անձը չի ներկայացնում որպես աշխատանք փնտրող անձ հաշվառվելու նպատակով անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, ապա նույն օրը տարածքային կենտրոնն աշխատանք փնտրող անձին տեղեկացնում է պակասող փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտության մասին: Եթե աշխատանք փնտրող անձը տեղեկացվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերը, ապա անհրաժեշտ փաստաթղթերի ստացման օր է համարվում տարածքային կենտրոն՝ սկզբնական դիմելու օրը: Նշված ժամկետից ուշ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում տարածքային կենտրոնի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի ստացման օր է համարվում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրը:

9. Աշխատանք փնտրող անձը համարվում է հաշվառված՝ սույն կարգով նախատեսված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տարածքային կենտրոնի կողմից ստանալու օրվանից:

10. Աշխատանք փնտրող՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած և «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածով նախատեսված գործունեության որևէ տեսակով չզբաղված անձանց, որոնք պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի և հաշվառված են տարածքային կենտրոնում, տրվում է գործազուրկի կարգավիճակ՝ սույն կարգով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով:

11. Հաշվառման նպատակով աշխատանք փնտրող անձի կողմից տարածքային կենտրոն ներկայացված փաստաթղթերը վերադարձվում են սույն կարգի 7-րդ կետով սահմանված գործողությունների իրականացումից հետո:

III. ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ

12. Աշխատանք փնտրող անձը հաշվառումից հանվում է՝

- 1) իրեն հաշվառումից հանելու մասին դիմում ներկայացնելու դեպքում.
- 2) օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ, 5-9-րդ կետերում նշված դեպքերում:

13. Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում նշված դեպքում գործազուրկի կարգավիճակը կասեցնելիս գործազուրկը հաշվառումից չի հանվում և համարվում է հաշվառված, որպես աշխատանք փնտրող անձ: Ժամանակավոր զբաղվածության ժամկետն ավարտելու դեպքում գործազուրկի կարգավիճակը վերականգնելու օրվանից՝ տվյալ գործազուրկը համարվում է հաշվառված, որպես աշխատանք փնտրող գործազուրկ:

14. Այն դեպքում, երբ աշխատանք փնտրող անձի կողմից ներկայացված գրավոր դիմումի կամ բնակչության վերաբերյալ օրենքով սահմանված անհատական հաշվառման տվյալների տեղեկատվական համակարգում (ռեգիստրում) ներառված տվյալների համաձայն աշխատանք փնտրող անձը տեղափոխվել է իր հաշվառումն իրականացրած տարածքային կենտրոնի սպասարկման վայրից դուրս գտնվող այլ բնակչության վայր, ապա աշխատանք փնտրող տվյալ անձի նախկին բնակչության վայրն սպասարկող տարածքային կենտրոնը նրան հանում է հաշվառումից: Եթե աշխատանք փնտրող անձն իր հաշվառումն իրականացրած տարածքային կենտրոնի

սպասարկման վայրից դուրս գտնվող այլ բնակության վայր տեղափոխվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում նոր բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոն է ներկայացնում սույն կարգի 15-րդ կետով սահմանված փաստաթղթերը, ապա նոր բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոնում համարվում է հաշվառված՝ նախկին բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոնի կողմից իրեն հաշվառումից հանելու օրը:

15. Սույն կարգի 14-րդ կետով նախատեսված դեպքում աշխատանք փնտրող անձը նոր բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոն է ներկայացնում միայն անձնագիրը կամ նույնականացման քարտը, ինչպես նաև հետադարձ ծանուցման հասցեն և իր հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե): Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն անձնագրի կամ նույնականացման քարտի փոխարեն կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթը (կացության քարտը), իսկ փախստականի կարգավիճակ ունեցող անձը՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը:

16. Սույն կարգի 14-րդ կետով սահմանված ժամկետի ուշացման դեպքում աշխատանք փնտրող անձը հաշվառվում է ընդհանուր հիմունքներով՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան և նոր բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոնում համարվում է հաշվառված՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տարածքային կենտրոնի կողմից ստանալու օրվանից:

17. Աշխատանք փնտրող անձի նախկին բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոնը տվյալ անձին հաշվառումից հանելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանք փնտրող անձի նոր բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոն է ուղարկում աշխատանք փնտրող անձի անհատական ծրագրի՝ համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի կողմից կնքված ու ստորագրված կրկնօրինակը, եթե անհատական ծրագիրը կազմված է եղել մինչև աշխատանք փնտրող տվյալ անձին հաշվառումից հանելը: Սույն կետով սահմանված պահանջը չի գործում, եթե աշխատանք փնտրող անձի անհատական ծրագիրը կազմվել է էլեկտրոնային եղանակով և ներառվել է նախարարության կողմից ձևավորված և վարվող տեղեկատվական շտեմարանում: Աշխատանք փնտրող անձի անհատական ծրագրի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը:

18. Աշխատանք փնտրող անձի նոր բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոնին հասանելի է լինում աշխատանք փնտրող տվյալ անձի վերաբերյալ տեղեկատվական շտեմարանում առկա տեղեկատվությունը:

IV. ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

19. Աշխատանք փնտրող անձը մինչև տարածքային կենտրոնում հաշվառվելը կարող է առցանց եղանակով նախնական գրանցվել գործակալության պաշտոնական կայքէջում: Նախնական գրանցման արդյունքում աշխատանք փնտրող անձը սույն կարգի իմաստով չի համարվում հաշվառված: Նախնական գրանցման էլեկտրոնային համակարգի միջավայրում գրանցված՝ աշխատանք փնտրող անձի համար հասանելի են դառնում իր կողմից տրամադրված տեղեկատվությանը համապատասխան, իր համար հարմար աշխատանք համարվող թափուր

աշխատատեղերի ցանկը, ինչպես նաև զբաղվածության պետական համապատասխան ծրագրերի մասին տեղեկատվությունը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Ց Ա Ն Կ

**ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԶՈՒՐԿԻ ԶՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ
ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ**

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում (այսուհետ՝ տարածքային կենտրոն) հաշվառված գործազուրկի՝ հարմար աշխատանքի տեղավորման կամ զբաղվածության պետական ծրագրում ընդգրկվելու առաջարկություն ստանալու համար տարածքային կենտրոն չներկայանալու հարգելի պատճառներն են՝

1) գործազուրկի հիվանդությունը.

2) տնային (ամբուլատոր) պայմաններում գործազուրկի կողմից ընտանիքի հիվանդ անդամի խնամքը.

3) գործազուրկի կողմից հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվող իր կամ իր խնամքի տակ գտնվող հիվանդ երեխայի խնամքը՝ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում.

4) գործազուրկի կողմից իր կամ իր խնամքի տակ գտնվող մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման ընթացքում խնամքը՝ երեխայի առողջարանային բուժման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում.

5) գործազուրկի կողմից մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխայի խնամքը, այն դեպքում, երբ երեխայի ծնողը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել.

6) զինվորական վարժական հավաքների մեջ գտնվելը՝ դրանց ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, ինչը պետք է հավաստվի տարածքային զինկոմիսարիատի կողմից տրված համապատասխան տեղեկանքով.

7) տարածքային կենտրոն ներկայանալու օրը կամ դրան նախորդող մեկ շաբաթվա ընթացքում գործազուրկի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր) կամ գործազուրկի խնամարկյալի մահվան դեպքը, ինչը պետք է հավաստվի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված մահվան վկայականով և համապատասխան այնպիսի

այլ փաստաթղթերով (ծննդյան վկայական, անձնագիր, ամուսնության վկայական), որոնցով հավաստվում է գործազուրկի ու մահացած անձի միջև մերձավոր ազգակցությունը կամ խնամիությունը.

8) արտակարգ և անկանխատեսելի այնպիսի հանգամանքներ (անհաղթահարելի ուժ), ինչպիսիք են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, տեխնածին և տարերային այլ աղետները, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, որոնք օբյեկտիվորեն անհնար են դարձրել տարածքային կենտրոն գործազուրկի ներկայանալը.

9) տարածքային կենտրոն ներկայանալու մասին նախապես տեղեկացված չլինելը:

2. Սույն հավելվածի 1-ին կետի 1-5-րդ ենթակետերում նշված պատճառները հավաստվում են ժամանակավոր անաշխատունակության թերթիկով, իսկ 4-րդ ենթակետում նշված դեպքերում՝ նաև առողջարանային բուժման ուղեգրի՝ առողջարանի համապատասխան պաշտոնատար անձի կողմից վավերացված լուսապատճենով: Ընդ որում, ժամանակավոր անաշխատունակության թերթիկը լրացվում և տրամադրվում է համապատասխան բժշկական հաստատության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված կարգին համապատասխան:

3. Գործազուրկի հարմար աշխատանքի տեղավորման կամ զբաղվածության պետական ծրագրում ընդգրկվելու առաջարկություն ստանալու համար տարածքային կենտրոն չներկայանալու համապատասխան հիմքերը ներկայացվում են ոչ ուշ, քան չներկայանալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են աշխատաշուկայի իրավիճակի մասն տեղեկատվության հասանելիության մեխանիզմների հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատաշուկայի մասին տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակը հասարակության լայն շերտերին, մասնագիտացված պետական ու ոչ պետական ինստիտուցիոնալ կառույցներին, հետազոտողներին աշխատաշուկայի իրավիճակի, աշխատուժի առաջարկի և պահանջարկի առկա միտումների, աշխատուժի ներքին և արտաքին տեղաշարժի կարգավորմանն

ուղղված միջոցառումների մասին տեղեկատվությունը հասանելի դարձնելն է:

3. Աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակի և զարգացման միտումների մասին տեղեկատվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոն) կողմից տրամադրված վարչական վիճակագրական ամսական և տարեկան հաշվետվությունների (որոնց ձևերը և ներկայացման ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը), տեղական աշխատաշուկայի վերլուծությունների տեսքով:

II. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հաստատած ձևով ամսական վարչական վիճակագրական հաշվետվության մեջ ներկայացվում են ընթացիկ ամսվա կտրվածքով, ինչպես նաև աճողական կարգով հետևյալ տվյալները՝ ըստ մարզային բաշխվածության՝

1) գործազրկության մակարդակը՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ԱՎԾ) տվյալներով.

2) զբաղվածների թիվը, սեռատարիքային կազմը և կրթական մակարդակը, զբաղվածության մակարդակը՝ ԱՎԾ-ի տվյալներով.

3) աշխատանք փնտրողների թիվը՝ ըստ զբաղմունքների դասակարգչի խմբերի, սեռատարիքային կազմի և կրթական մակարդակի.

4) գործազուրկների, այդ թվում՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց թիվը, սեռատարիքային կազմը և կրթական մակարդակը.

5) աշխատուժի պահանջարկը (թափուր և նոր ստեղծվող աշխատատեղեր)՝ ըստ զբաղմունքների դասակարգչի խմբերի և տնտեսական գործունեության տեսակների.

6) զբաղվածության պետական ծրագրերում (այսուհետ՝ ծրագիր) ընդգրկված անձանց թիվը՝ ըստ ծրագրերի և այդ անձանց կարգավիճակի՝ աշխատանք փնտրող զբաղված, գործազուրկ, աշխատաշուկայում անմրցունակ անձ (այսուհետ՝ կարգավիճակ).

7) զբաղվածության ծրագրերում ընդգրկված և տարածքային կենտրոնների միջնորդությամբ աշխատանքի տեղավորված անձանց թիվը՝ ըստ ծրագրերի և այդ անձանց կարգավիճակի.

8) առանց զբաղվածության ծրագրերում ընդգրկելու, տարածքային կենտրոնների միջնորդությամբ աշխատանքի տեղավորված անձանց թիվը՝ ըստ այդ անձանց կարգավիճակի:

5. Սույն կարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը տրամադրվում է եռամսյակային կտրվածքով՝ առանց մարզային բաշխվածության:

6. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հաստատած ձևով տարեկան վարչական վիճակագրական հաշվետվության մեջ ներկայացվում են տարեկան կտրվածքով հետևյալ տվյալները՝ ըստ մարզային բաշխվածության՝

1) կայուն զբաղվածության ցուցանիշները՝ ըստ ծրագրերի.

2) ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշը՝ ԱՎԾ-ի տվյալներով.

3) զբաղվածների թիվը, զբաղվածության մակարդակը՝ ըստ մարզային բաշխվածության՝ ԱՎԾ-ի տվյալներով:

4) հաջորդ տարվա զբաղվածության մակարդակի կանխատեսումը՝ ԱՎԾ-ի կողմից իրականացվող համապատասխան հետազոտության ամփոփ արդյունքներով, եթե նմանատիպ հետազոտություն իրականացված է հաշվետու տարվա համար:

5) գործազուրկների թիվը, գործազրկության մակարդակը՝ ԱՎԾ-ի տվյալներով:

6) հաջորդ տարվա գործազրկության մակարդակի կանխատեսումը, որը ներկայացվում է՝ ԱՎԾ-ի կողմից իրականացվող համապատասխան հետազոտության ամփոփ արդյունքներով, եթե նմանատիպ հետազոտություն իրականացված է հաշվետու տարվա համար:

7) տարածքային կենտրոններում հաշվառված՝ վերադարձող աշխատանքային միգրանտների թիվը, սեռատարիքային կազմը, կրթական մակարդակը և կարգավիճակը:

III. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

7. Աշխատաշուկայի իրավիճակի մասին տեղեկատվությունը ներառվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվական շտեմարանում և հասանելի է յուրաքանչյուրին՝ գործակալության պաշտոնական կայքէջի (այսուհետ՝ կայք) միջոցով:

8. Կայքում առկա տեղեկատվությունը հնարավոր է գտել՝ ըստ առկա ցուցանիշների, ամիսների, տարիների և մարզային բաշխվածության:

9. Տեղեկատվության ամբողջական և ճկուն օգտագործման նպատակով այն կարող է նաև կայքից ներբեռնվել «xlsx», «xml», «pdf» ձևաչափերով:

10. Կայքում օգտվողներին տրվում է ազատ գրանցվելու հնարավորություն՝ օգտվողի կողմից ներկայացված էլեկտրոնային հասցեին ցուցանիշները պարբերաբար ուղարկելու նպատակով:

11. Կայքում ապահովվում է՝ ըստ ընտրված ցուցանիշների և ժամանակաշրջանների՝ գրաֆիկների կառուցման հնարավորություն:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

**ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ
ԿԱՐԳՆ ՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՈՂ
ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԵՐԻ (ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ)**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) և այդ ծրագրի շրջանակներում

աշխատանք փնտրող անձանց համար իրականացվող՝ զբաղվածության պետական ծրագրերի՝ ըստ մարզերի և աշխատանք փնտրող անձանց առանձին խմբերի (շահառուների) տեղաբաշխման հետ կապված հարաբերությունները:

2. Նախարարությունը ծրագիրը տեղաբաշխում է՝ հիմք ընդունելով շահառուների ներգրավման առաջնահերթությունները, առանձին տարածաշրջանների աշխատաշուկաների հիմնական բնութագրիչները, սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի առանձնահատկությունները, նախորդ տարվա ընթացքում իր կողմից իրականացված աշխատաշուկայի վերլուծությունների և գնահատումների ամփոփ արդյունքները, ինչպես նաև զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարությամբ հաստատված թիրախային ցուցանիշները:

3. Ծրագիրն ըստ մարզերի (Երևան քաղաքի) տեղաբաշխվում է՝ հիմք ընդունելով հետևյալ չափանիշները՝

հայտ-առաջարկով ներկայացված ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով

1) Ա= _____

հայտ-առաջարկով ներկայացված ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների ընդհանուր չափը

աշխատանք փնտրող անձանց թիվը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով

2) Բ= _____

աշխատանք փնտրող անձանց ընդհանուր թիվը

ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների թիվը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով

3) Գ= _____

ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների ընդհանուր թիվը

նախորդ տարվա ընթացքում ծրագրով փաստացի ծախսված գումարի չափը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով

4) Դ = _____

նախորդ տարվա համար ծրագրով տվյալ մարզին (Երևան քաղաքին) հատկացված գումարի չափը

գործազուրկների թիվը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով

5) Ե = _____

գործազուրկների ընդհանուր թիվը

նախորդ տարվա ընթացքում ծրագրի արդյունքում աշխատանքի տեղավորված անձանց

թիվը տվյալ մարզում (Երևան քաղաքում)

$$6) \text{ Զ} = \frac{\text{նախորդ տարվա ընթացքում ծրագրի արդյունքում աշխատանքի տեղավորված անձանց ընդհանուր թիվը}}{\text{չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը տվյալ մարզում (Երևան քաղաքում)}}$$

$$7) \text{ Է} = \frac{\text{չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը տվյալ մարզում (Երևան քաղաքում)}}{\text{չկրկնվող թափուր աշխատատեղերի ընդհանուր թիվը}},$$

ընդ որում, չկրկնվող թափուր աշխատատեղը՝ գործատուի կողմից առաջին անգամ նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոն ներկայացված թափուր աշխատատեղն է:

4. Հիմք ընդունելով սույն կարգի 3-րդ կետով նախատեսված չափանիշները՝ ծրագիրն ըստ մարզերի (Երևան քաղաքի) տեղաբաշխվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

- «Ա» չափանիշի կշիռը՝ Կ1
- «Բ» չափանիշի կշիռը՝ Կ2
- «Գ» չափանիշի կշիռը՝ Կ3
- «Դ» չափանիշի կշիռը՝ Կ4
- «Ե» չափանիշի կշիռը՝ Կ5
- «Զ» չափանիշի կշիռը՝ Կ6
- «Է» չափանիշի կշիռը՝ Կ7

$$\text{Մթ} = \text{Կ1} \times \text{Ա} + \text{Կ2} \times \text{Բ} + \text{Կ3} \times \text{Գ} + \text{Կ4} \times \text{Դ} + \text{Կ5} \times \text{Ե} + \text{Կ6} \times \text{Զ} + \text{Կ7} \times \text{Է},$$

որտեղ՝

թ-ն՝ Երևան քաղաքի և մարզերի թիվն է (1-11),

Մթ-ն յուրաքանչյուր մարզի (Երևան քաղաքի) ամփոփ ցուցանիշն է:

Ցուցանիշները կլորացվում են մինչև տասնազարեքորդականը:

$$\text{Գբ} = \frac{\text{Մթ}}{\text{Մթհ}}, \quad \text{որտեղ՝}$$

Մթհ-ն՝ մարզերի և Երևան քաղաքի Մթ ցուցանիշների հանրագումարն է:

Գբ-ն յուրաքանչյուր մարզի (Երևան քաղաքի) բաշխման գործակիցն է՝ արտահայտված տոկոսով:

5. Յուրաքանչյուր մարզի կտրվածքով՝ ծրագիրն ըստ նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների տեղաբաշխվում է՝ հիմք ընդունելով սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերում նշված չափանիշները:

6. Ծրագրին մաս կազմող՝ առանձին ծրագրերին հատկացված ֆինանսական միջոցները կարող են վերաբաշխվել նախարարության կողմից՝ ոչ ավելի, քան տվյալ ծրագրին հատկացված ընդհանուր ֆինանսական միջոցների չափի 25 տոկոսի սահմաններում՝ աշխատաշուկայի օբյեկտիվ

իրավիճակից բխող, փաստարկված հիմնավորումներով:

7. Ծրագրի շրջանակներում աշխատանք փնտրող անձանց համար իրականացվող յուրաքանչյուր ծրագրի համար՝ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված չափանիշների կշիռները սահմանում է նախարարը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 7
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) կողմից աշխատանքի տոնավաճառի կազմակերպման (այսուհետ՝ ծրագիր) հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրի նպատակը գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով ապահովելն է.

1) աշխատանք փնտրողի կայուն զբաղվածությունը.

2) գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղի արդյունավետ համալրումը:

3. Ծրագիրը մեկօրյա միջոցառում է, որն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված ծառայություններ մատուցող կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից:

4. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

5. Գործակալությունը կազմակերպում է աշխատանքի տոնավաճառ Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ելնելով աշխատաշուկայի վերլուծության և կանխատեսման արդյունքներից: Ծրագրի իրականացման մարզի կամ Երևան քաղաքի ընտրությունը պայմանավորված է հետևյալ

նվազագույն պայմաններով՝

1) Երևան քաղաքում՝ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, արտադրական ծավալների ավելացման, ներդրումների իրականացման կանխատեսումների արդյունքում թափուր աշխատատեղերի հայտ ներկայացրած առնվազն 50 գործատուի, իսկ Հայաստանի Հանրապետության մարզերում՝ առնվազն 25 գործատուի առկայության դեպքում:

2) Երևան քաղաքում առնվազն 200, իսկ Հայաստանի Հանրապետության մարզերում առնվազն 50 թափուր աշխատատեղի հայտի առկայության դեպքում:

6. Ծրագրի իրականացման վայրի, ժամկետի, գործատուների մասնակցության, օգտագործվող սարքավորումների, սպագրական նյութերի, գովազդային ծառայությունների, տրանսպորտային և այլ ծախսերի հետ կապված, ինչպես նաև ծրագրի այլ կազմակերպչական հարցեր կարգավորվում են կազմակերպության հետ կնքված գնման պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր):

7. Գործակալությունը ծրագրի տեխնիկական բնութագրի և պայմանագրի պատճենները տրամադրում է ծրագրի իրականացման վայրն սպասարկող տարածքային կենտրոնին (այսուհետ՝ տարածքային կենտրոն):

8. Կազմակերպությունը ծրագրի իրականացման օրվանից մեկ ամիս առաջ, գործակալության հետ նախապես համաձայնեցնելով, զանգվածային լրատվության, ինչպես նաև տեղեկատվության տարածման այլ միջոցներով (հանդիպումներ, հրավեր-նամակներ, թռուցիկներ, ուղեցույցներ, պաստառներ և այլն) հրապարակում է տեղեկատվություն ծրագրի մասին՝ նշելով իրականացման վայրը, ժամկետը, կազմակերպության տվյալները (անվանումը, հեռախոսահամարը): Տոնավաճառի մասին տեղեկատվությունն արտացոլվում է գործակալության պաշտոնական կայքէջում և նախարարության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում՝ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, այլ օրենքներին և իրավական ակտերին համապատասխան: Այդ տեղեկատվությունը փակցվում է նաև տարածքային կենտրոնի տեսանելի վայրում:

9. Տարածքային կենտրոնը պայմանագիրն ստանալուց հետո, որպես ծրագրի նախապատրաստական աշխատանք, կազմում է աշխատանք փնտրողների հետ հանդիպումների և խորհրդատվական աշխատանքների իրականացման ժամանակացույց և նշանակում ծրագրի պատասխանատու:

10. Գործակալությունը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը՝ նախարարության աշխատակազմ է ներկայացնում սույն ծրագրի ծախսերի նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ):

11. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

12. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգ:

13. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Կ Ա Ր Գ

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ
ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ՄԻԱՆՎԱԳ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոն) կողմից աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման (այսուհետ՝ ծրագիր) հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրի նպատակն աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռնման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է, ինչպես նաև աշխատատեղի հարմարեցման աջակցության միջոցով՝ հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածության ապահովումը: Ընդ որում, հաշմանդամություն ունեցող անմրցունակ անձի համար սույն կարգով նախատեսված պահանջներով, ծրագրի կողմ հանդիսացող գործատուի և հաշմանդամություն ունեցող անմրցունակ անձի առաջարկով գործատուին միաժամանակ կարող են տրամադրվել սույն կարգի 3-րդ կետով սահմանված ենթածրագիր 1-ով և ենթածրագիր 2-ով նախատեսված միանվագ փոխհատուցումները:

3. Ծրագրում ներառված են հետևյալ երկու ենթածրագրերը, որոնք աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար կարող են իրականացվել ինչպես համատեղ, այնպես էլ առանձին՝

1) ենթածրագիր 1՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին.

2) ենթածրագիր 2՝ հաշմանդամություն ունեցող գործազուրկների աշխատատեղի հարմարեցման համար միանվագ փոխհատուցում գործատուին:

4. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

II. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄԲՑՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻԱՆՎԱԳ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ

5. Սույն գլխով կարգավորվում են տարածքային կենտրոններում հաշվառված աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար գործատուին միանվագ փոխհատուցման ենթաձևերի (այսուհետ՝ ենթաձևեր 1) կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

6. Անմրցունակ անձը ենթաձևեր 1-ում կարող է ընդգրկվել մեկ անգամ:

7. Հաշմանդամություն ունեցող անմրցունակ անձանց համար ենթաձևեր 1-ն իրականացվում է՝ հաշվի առնելով նախարարության աշխատակազմի բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ ԲՍՓԳ) տարածքային մարմինների կամ ԲՍՓԳ-ի վերափորձաքննության բաժնի կողմից կազմված հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագիրը:

8. Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար գործատուին տրամադրվող միանվագ փոխհատուցման չափը մեկ անձի համար կազմում է 200.000 դրամ:

9. Տվյալ տարվա ընթացքում իրականացվելիք ենթաձևեր 1-ի մասին տեղեկատվությունն արտացոլվում է գործակալության պաշտոնական կայքէջում և նախարարության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում: Տարածքային կենտրոնը տեղեկատվությունը տեղադրում է իր գտնվելու վայրում՝ անմրցունակ անձի համար տեսանելի տեղում, իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում տեղակայված լինելու դեպքում՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում:

10. Ենթաձևեր 1-ում ընդգրկվելու ցանկություն ունեցող անմրցունակ անձանց տարածքային կենտրոնի կողմից տրամադրվում է այդ ծրագրի կազմակերպման մասին խորհրդատվություն:

11. Եթե ենթաձևեր 1-ում ընդգրկվելու ցանկություն ունեցող շահառուների թիվը գերազանցում է տարածքային կենտրոնի՝ տվյալ տարվա զբաղվածության ամենամյա պետական ծրագրով նախատեսված շահառուների թիվը, ապա ընդգրկվելու նախապատվությունը տրվում է առավել երկար ժամկետով հաշվառված անմրցունակ անձանց:

12. Տարածքային կենտրոնը ենթաձևեր 1-ի կազմակերպման նպատակով բանակցում է համապատասխան թափուր աշխատատեղի հայտը ներկայացրած գործատուի հետ՝ ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած անձի մասնակցությամբ: Բանակցությունների արդյունքում ձեռք բերված վերջնական համաձայնության հիման վրա գործատուի, տարածքային կենտրոնի և ենթաձևեր 1-ի շահառուի միջև կնքվում է աշխատաշուկայում անմրցունակ անձի աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար գործատուին միանվագ փոխհատուցման մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր 1)՝ չորս օրինակից, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի (այսուհետ՝ նախարար) հաստատած օրինակելի ձևին համապատասխան:

13. Պայմանագիր 1-ը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գործատուն ենթաձևեր 1-ի շահառու հանդիսացող անձի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ պայմանագիր 1-ում նշված պայմաններով, գործողության ժամկետով, և 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային պայմանագրի կրկնօրինակը ներկայացնում տարածքային կենտրոն:

14. Տարածքային կենտրոնը պայմանագիր 1-ի մեկ օրինակը և ենթածրագիր 1-ի արդյունքում աշխատանքի տեղավորված անմրցունակ անձանց ցուցակը 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է գործակալություն: Աշխատանքի տեղավորված անմրցունակ անձանց ցուցակում նշվում է՝ անձի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, անձին անմրցունակ ճանաչելու պատճառները, առկայության դեպքում՝ անձի կրթությունը և որակավորումը, ինչպես նաև աշխատանքային ստաժը, այդ թվում՝ մասնագիտական աշխատանքային ստաժը, եթե անձը ենթածրագիր 1-ում ընդգրկվելու հետ միաժամանակ ընդգրկվել է նաև ենթածրագիր 2-ում, ապա նաև՝ դրա մասին համապատասխան նշում:

15. Տարածքային կենտրոնը ենթածրագիր 1-ի վերաբերյալ համապատասխան առաջարկի, այն ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ նշումներ է կատարում այդ անձի զբաղվածության ապահովման անհատական ծրագրում:

16. Տարածքային կենտրոնները գործակալություն են ներկայացնում ծրագրի համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը՝ նախարարի հաստատած ձևին համապատասխան:

17. Գործակալությունը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը՝ նախարարության աշխատակազմ է ներկայացնում սույն ծրագրի ծախսերի նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ):

18. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

19. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգ:

20. Տարածքային կենտրոնը գումարը 2 աշխատանքային օրվա ընթացքում, սահմանված կարգով, փոխանցում է գործատուի բանկային հաշվի համարին:

21. Ենթածրագիր 1-ի շրջանակներում գործատուին տրամադրված միանվագ փոխհատուցման գումարը ենթակա է վերադարձման՝

1) գործատուի կողմից, եթե սույն կարգի 13-րդ կետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվում է գործատուի նախաձեռնությամբ՝ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում.

2) ենթածրագիր 1-ի շահառու հանդիսացող անձի կողմից, եթե սույն կարգի 13-րդ կետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատողի նախաձեռնությամբ՝ պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում.

3) գործատուի և ենթածրագիր 1-ի շահառու հանդիսացող անձի կողմից հավասարապես, եթե աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատանքային պայմանագրի կողմերի համաձայնությամբ՝ պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում:

III. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻԱՆՎԱԳ ՓՈՒՀԱՏՈՒՑՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ

22. Սույն գլխով կարգավորվում են տարածքային կենտրոնի կողմից հաշմանդամություն ունեցող

գործագուրկի համար՝ գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման ծրագրի (այսուհետ՝ ենթածրագիր 2) կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

23. Ենթածրագիր 2-ում ընդգրկված յուրաքանչյուր անձի համար գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման նպատակով փոխհատուցվում են աշխատանքի համար անհրաժեշտ հատուկ պարագաների, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական ու էրգոնոմետրիկ հատուկ պահանջների ապահովման համար անհրաժեշտ ծախսերը:

24. Անմրցունակ անձը ենթածրագիր 2-ում կարող է ընդգրկվել մեկ անգամ: Եթե ենթածրագիր 2-ի իրականացման ընթացքում շահառու հանդիսացող անձին հաշմանդամություն չի սահմանվում, ապա նա շարունակում է ընդգրկված մնալ ծրագրում՝ մինչև պայմանագրի ավարտը:

25. Սույն կարգի 23-րդ կետում նշված փոխհատուցվող գումարը մեկ անձի համար չպետք է գերազանցի հինգ հարյուր հազար դրամը:

26. Տվյալ տարվա ընթացքում իրականացվելիք՝ ենթածրագիր 2-ի մասին տեղեկատվությունն արտացոլվում է գործակալության պաշտոնական կայքէջում և նախարարության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում: Տարածքային կենտրոնը տեղեկատվությունը տեղադրում է իր գտնվելու վայրում՝ անմրցունակ անձի համար տեսանելի տեղում, իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում տեղակայված լինելու դեպքում՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում:

27. Ենթածրագիր 2-ում ընդգրկվելու ցանկություն ունեցող անմրցունակ անձանց տարածքային կենտրոնի կողմից տրամադրվում է այդ ծրագրի կազմակերպման վերաբերյալ խորհրդատվություն:

28. Եթե ենթածրագիր 2-ում ընդգրկվելու ցանկություն ունեցող շահառուների թիվը գերազանցում է տարածքային կենտրոնի՝ տվյալ տարվա զբաղվածության ամենամյա պետական ծրագրով նախատեսված շահառուների թիվը, ապա ծրագրում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է առավել երկար ժամկետով հաշվառված շահառուներին:

29. Տարածքային կենտրոնը ենթածրագիր 2-ի կազմակերպման նպատակով բանակցում է համապատասխան թափուր աշխատատեղի հայտը ներկայացրած գործատուի հետ՝ ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած անձի մասնակցությամբ:

30. Տարածքային կենտրոնը հաշմանդամություն ունեցող անձի համար նախատեսված աշխատատեղի հարմարեցման վերաբերյալ գործատուի առաջարկը և համապատասխան ծախսերի նախահաշիվն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ դրանց, ինչպես նաև անձի վերականգնողական անհատական ծրագրի կրկնօրինակները ներկայացնում է սույն կարգի 31-րդ կետում նշված կազմակերպություն:

31. Նախարարության «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը տարածքային կենտրոնից սույն կարգի 30-րդ կետում նշված փաստաթղթերի կրկնօրինակներն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ ստացված փաստաթղթերի հիման վրա տարածքային կենտրոն է ներկայացնում եզրակացություն սույն կարգի 23-րդ կետում նշված աշխատատեղի հարմարեցման նպատակով գործատուին փոխհատուցման ենթակա ծախսերի արդյունավետության և դրանց չափերի հնարավոր օպտիմալացման, տվյալ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ հատուկ պարագաների տեխնիկական պարամետրերի, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական և էրգոնոմետրիկ հատուկ պահանջների կիրառման անհրաժեշտության մասին:

32. Տարածքային կենտրոնը սույն կարգի 31-րդ կետում նշված եզրակացությունն ստանալու հաջորդ օրը՝ եզրակացության և սույն կարգի 30-րդ կետում նշված փաստաթղթերի կրկնօրինակները և ենթածրագիր 2-ի շահառու հանդիսացող անձի՝ իր վերականգնողական անհատական ծրագիրը վերանայելու մասին դիմումը ներկայացնում է սույն կարգի 33-րդ կետում նշված մարմին:

33. ԲՄՓԳ-ի տարածքային մարմինը կամ վերափորձաքննության բաժինը սույն կարգի 32-րդ կետում նշված փաստաթղթերի կրկնօրինակները և անձի դիմումը տարածքային կենտրոնից ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ ձևակերպում է հարմարեցման ենթակա աշխատատեղում հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային պայմանների և բնույթի ցուցվածությունը կամ հակացուցվածությունը, և հաշմանդամություն ունեցող անձի ախտաբանական վիճակների առանձնահատկություններից ելնելով՝ դրա մասին համապատասխան նշում է կատարում անձի մասնագիտական վերականգնման ծրագրի «Աշխատանքային երաշխավորագիր» բաժնում և վերականգնողական անհատական ծրագրի կրկնօրինակը ներկայացնում տարածքային կենտրոն:

34. Տարածքային կենտրոնը, ստանալով սույն կարգի 33-րդ կետում նշված վերականգնողական անհատական ծրագրի կրկնօրինակը, երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության լրացուցիչ բանակցում է գործատուի հետ և լրամշակում է հաշմանդամություն ունեցող անձի համար նախատեսված աշխատատեղի հարմարեցման վերաբերյալ գործատուից ստացված առաջարկը, լրամշակված տարբերակը ներկայացնում գործատուին:

35. Սույն կարգի 30-34-րդ կետերով նախատեսված գործընթացների արդյունքում ձեռք բերված վերջնական համաձայնության հիման վրա գործատուի, տարածքային կենտրոնի և ենթածրագիր 2-ի շահառուի միջև կնքվում է հաշմանդամություն ունեցող գործազուրկի համար՝ գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման համար գործատուին միանվագ փոխհատուցման մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր 2)՝ չորս օրինակից՝ նախարարի հաստատած օրինակելի ձևին համապատասխան:

36. Պայմանագիր 2-ը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գործատուն ենթածրագիր 2-ի շահառու հանդիսացող անձի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ պայմանագիր 2-ում նշված պայմաններով, գործողության ժամկետով և 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային պայմանագրի կրկնօրինակը ներկայացնում տարածքային կենտրոն:

37. Տարածքային կենտրոնը պայմանագիր 2-ի մեկ օրինակը և ենթածրագիր 2-ի արդյունքում աշխատանքի տեղավորված հաշմանդամություն ունեցող գործազուրկների ցուցակը 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է գործակալություն: Աշխատանքի տեղավորված հաշմանդամություն ունեցող գործազուրկների ցուցակում նշվում է՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, առկայության դեպքում՝ կրթությունը և որակավորումը, ինչպես նաև աշխատանքային ստաժը, այդ թվում՝ մասնագիտական աշխատանքային ստաժը:

38. Տարածքային կենտրոնը ենթածրագիր 2-ի վերաբերյալ համապատասխան առաջարկի, այն ընդունելու կամ հրաժարվելու, ինչպես նաև դրանցից բխող գործազուրկի կարգավիճակի կասեցման, վերականգնման վերաբերյալ նշումներ է կատարում այդ անձի անհատական ծրագրում:

39. Գործակալությունը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը՝ նախարարության աշխատակազմ է ներկայացնում սույն ծրագրի ծախսերի նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ):

40. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծախսերի նախահաշիվներն

ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

41. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգ:

42. Տարածքային կենտրոնը երկու աշխատանքային օրվա ընթացքում, սահմանված կարգով, գումարը փոխանցում է գործատուի բանկային հաշվի համարին:

43. Ենթաձրագիր 2-ի շրջանակներում գործատուին տրամադրված միանվագ փոխհատուցման գումարը ենթակա է վերադարձման`

1) գործատուի կողմից, եթե սույն կարգի 36-րդ կետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվում է գործատուի նախաձեռնությամբ` աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում.

2) ենթաձրագիր 2-ի շահառու հանդիսացող անձի կողմից, եթե սույն կարգի 36-րդ կետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատողի նախաձեռնությամբ` պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում.

3) գործատուի և ենթաձրագիր 2-ի շահառու հանդիսացող անձի կողմից հավասարապես, եթե աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատանքային պայմանագրի կողմերի համաձայնությամբ` պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում:

44. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. գործատուին միանվագ փոխհատուցումը տրամադրելուց հետո աշխատանքի ընդունված անմրցունակ անձանց և այդ անձանցից` 1 տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թվի տարբերությունը հարաբերվում է գործատուին միանվագ փոխհատուցումը տրամադրելուց հետո աշխատանքի ընդունված անմրցունակ անձանց թվի վրա և արտահայտվում է տոկոսով: Ընդ որում, ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 9
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

**ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՄՈՏ ԱՌԿԱ
ԹԱՓՈՒՐ ԵՎ ՆՈՐ ՍՏԵՂԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ, ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ
ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎՆ ՈՒ ԵՂԱՆԱԿԸ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնների հետ (այսուհետ՝ տարածքային կենտրոն) գործատուների համագործակցության նպատակը, սկզբունքները, կազմակերպման և իրականացման քայլերը, մեթոդներն ու ընթացակարգերը, գործատուների հետ համագործակցության ընթացքում անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման, ստացման և գրանցման եղանակներն ու ձևերը, գործատուների հետ համագործակցության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով՝ գործատուների հետ համագործակցությունը նախատեսում է զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում գործատուների և տարածքային կենտրոնի միջև փոխշահավետ ու մշտական հարաբերությունների հաստատում, հետևողական ընդլայնում, խորացում, հետադարձ կապի ապահովում և այդ հենքի վրա բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ ամենամյա ծրագիր) իրականացվող զբաղվածության պետական ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) նպատակայնության և արդյունավետության թիրախավորված բարձրացում:

3. Ամենամյա ծրագրին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի՝ մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 25-ը գործակալության պետը կազմում է գործատուների հետ համագործակցության տվյալ տարվա ծրագիրը՝ համապատասխան թիրախավորմամբ:

4. Տարածքային կենտրոնի գործունեության տարածքում տնտեսավարող գործատուների հետ համագործակցության իրականացումը վերապահվում է տարածքային կենտրոնի աշխատողներից՝ գործակալության պետի հրամանով առանձնացված մասնագետին (մասնագետներին) (այսուհետ՝ զբաղվածության գործակալ):

5. Սույն կարգի 12-րդ կետում նշված ծառայությունները տարածքային կենտրոնի կողմից գործատուներին մատուցվում են անվճար:

II. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

6. Գործատուի հետ համագործակցության հիմնական նպատակներն են՝

1) ապահովել աշխատանք փնտրող անձանց կայուն զբաղվածության ցուցանիշի թիրախավորված աճը.

2) ապահովել աշխատանք փնտրող անձանց տարածքային կենտրոնի կողմից ամենամյա ծրագրի շրջանակներում մատուցված ծառայությունների արդյունքների մասին հետադարձ տեղեկատվության ստացումը գործատուներից, այդ տեղեկատվության օբյեկտիվ վերլուծության արդյունքներով՝ ծրագրերի արդյունավետությունը, ինչպես նաև ոչ նպատակային օգտագործված ֆինանսական միջոցների վերադարձման գործընթացները.

3) ներկայացնել ծրագրերի հաջորդ տարվա պլանավորման վերաբերյալ առաջարկություններ, որոնք բխում են տարածքի աշխատաշուկայի օբյեկտիվ իրավիճակից.

4) հետևողականորեն ավելացնել զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում տարածքային կենտրոնի հետ համագործակցող գործատուների թիվը.

5) ապահովել գործատուների մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի մասին

տեղեկատվությունը տարածքային կենտրոնի կողմից հավաքագրման ամբողջական հնարավորությունների գործնական կիրառությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև այդ գործընթացների հաշվետվողականությունը.

6) պարբերաբար ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ նոր գրանցված (հաշվառված) գործատուների և նրանց կողմից ներկայացվող աշխատուժի պահանջարկի մասին.

7) պարզել և վերլուծել աշխատատեղերի կրճատումների (առաջիկա մեկ տարվա ընթացքում), այդ թվում՝ զանգվածային ազատումների մասին տեղեկատվությունը, դրանց պատճառները, գործատուներին ներկայացնել աշխատատեղերի նախատեսվող կրճատումների հնարավոր կանխարգելման վերաբերյալ գործնական առաջարկություններ.

8) բարձրացնել գործատուների շրջանում ծրագրերի, ինչպես նաև տարածքի աշխատաշուկայի օբյեկտիվ իրավիճակի վերաբերյալ իրազեկվածությունը.

9) առավելագույնս հասցեական, նպատակային ու արդյունավետ դարձնել առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղը համալրելու նպատակով՝ աշխատանք փնտրող համապատասխան անձանց՝ տարածքային կենտրոնի կողմից գործատուի մոտ ուղեգրումը.

10) օժանդակել գործատուներին առկա և սպասվող թափուր աշխատատեղերն անհրաժեշտ աշխատողներով արդյունավետ համալրման գործում:

7. Գործատուների հետ համագործակցության հիմնական սկզբունքներն են՝

1) աշխատանքի կամավորությունը և աշխատուժի ազատ ընտրությունը.

2) սոցիալական գործընկերությունը.

3) կողմերի համար հարաբերությունների փոխշահավետությունը, կայունությունը և հետադարձ կապի ապահովումը.

4) ըստ առաջնահերթությունների՝ աշխատանք փնտրող անձանց պետական աջակցության և, որպես դրա վերջնական արդյունք, կայուն զբաղվածության ապահովումը.

5) աշխատաշուկայի պետական կարգավորման շրջանակներում տեղեկատվական համաչափության ապահովումը.

6) աշխատաշուկայի պետական կարգավորման շրջանակներում աշխատաշուկայի տարածքային օբյեկտիվ իրավիճակից բխող զարգացման միտումների հաշվառումը:

III. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

8. Գործատուների հետ համագործակցությունն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) տարածքային կենտրոնի հետ որոշակի համագործակցություն ունեցող գործատուների վերաբերյալ նախարարության կողմից ձևավորված և վարվող համապատասխան տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ գործատուների գրանցամատյան) առկա տեղեկությունների ճշգրտում և հետագա համագործակցության հնարավորությունների, խնդիրների վերհանում.

2) տարածքային կենտրոնի հետ որոշակի համագործակցություն չունեցող և նոր գրանցված (հաշվառված) գործատուների մասին տեղեկատվության հավաքագրում.

3) գործատուի հետ կապի հաստատման՝ գործատուի համար առավել արդյունավետ եղանակի (եղանակների) ընտրություն և ըստ այդմ՝ կապի հաստատում.

4) գործատուին անհրաժեշտ՝ զբաղվածության պետական կարգավորման, ինչպես նաև տարածքային աշխատաշուկայի իրավիճակի մասին տեղեկատվության և խորհրդատվության

տրամադրում.

5) գործատուից առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, աշխատատեղերի հնարավոր կրճատումների ու զանգվածային ազատումների մասին տեղեկատվության պարբերաբար ստացում.

6) աշխատատեղերի հնարավոր կրճատումների և զանգվածային ազատումների պատճառների ճշտում գործատուից.

7) գործատուների մասին հավաքագրված ու գործատուներից ստացված և գործատուների գրանցամատյանում մուտքագրված տեղեկատվության պարբերաբար թարմացում.

8) սույն կետի 7-րդ ենթակետում նշված տեղեկատվության վերլուծություն՝ ըստ յուրաքանչյուր գործատուի.

9) սույն կետի 8-րդ ենթակետում նշված վերլուծության հիման վրա գործատուի հետ արդյունավետ համագործակցության ձևերի և հնարավորությունների համալիր գնահատում.

10) սույն կետի 9-րդ ենթակետում նշված գնահատման արդյունքների հիման վրա գործատուների հետ համագործակցության առաջնահերթությունների սահմանում.

11) գործատուների հետ համագործակցության վերաբերյալ կոնկրետ առաջարկության ձևավորում, այն գործատուին ներկայացնելը և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը.

12) սույն կետի 11-րդ ենթակետում նշված առաջարկության քննարկում գործատուի հետ և համապատասխանաբար՝

ա. վերջնական հստակեցում,

բ. իրականացման շուրջ կոնկրետ պայմանավորվածությունների ձեռքբերում.

13) սույն կետի 12-րդ ենթակետում նշված առաջարկության հիման վրա ձևավորված գործնական համագործակցության իրականացում՝

ա. զբաղվածության գործակալի կողմից նախապես ընտրված աշխատանք փնտրող անձին (անձանց)՝ աշխատանքի տեղավորման նպատակով ուղեգրում գործատուի մոտ և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝

բ. գործատուի մոտ առկա թափուր և (կամ) նոր ստեղծվող աշխատատեղերը տարածքային կենտրոնում հաշվառված՝ աշխատանք փնտրող անձով համալրելու նպատակով գործատուի, զբաղվածության գործակալի և աշխատանք փնտրող անձի միջև բանակցությունների վարման կազմակերպում և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը.

14) սույն կետի 13-րդ ենթակետի «բ» պարբերությունում նշված բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան՝ ծրագրի մեկնարկում և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը.

15) աշխատատեղերի հնարավոր կրճատումները կանխարգելելու նպատակով գործատուի, զբաղվածության գործակալի և աշխատատեղերի կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ գործատուից գրավոր ծանուցում ստացած աշխատողի (աշխատողների) միջև բանակցությունների վարման կազմակերպում, նշված բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան՝ գործատուին առաջարկություններ ներկայացնելը և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը.

16) սույն կետի 13-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված ուղեգրման արդյունքների մասին տեղեկատվության ստացում գործատուից և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը՝ հաշվառման նպատակով առանձնացնելով այն դեպքերը, երբ իրեն առաջարկվող հարմար աշխատանքից հրաժարվել է աշխատանք փնտրող անձը.

17) ծրագրի ավարտից հետո՝ իրականացման արդյունքների վերաբերյալ գործատուների գրանցամատյանում համապատասխան նշում կատարելը.

18) ծրագրի իրականացման, ինչպես նաև սույն կետի 13-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված ուղեգրման արդյունքում գործատուի մոտ աշխատանքի տեղավորված՝ աշխատանք փնտրող անձի աշխատանքային հարաբերությունները շարունակելու, այդ շրջանակներում առկա խնդիրների մասին տեղեկատվության պարբերաբար ստացում գործատուից՝ դրանց մասին համապատասխան նշումներ կատարելով գործատուների գրանցամատյանում.

19) սույն կետի 15-րդ ենթակետում նշված՝ աշխատանքից ազատման իրական ռիսկ ունեցող աշխատողների աշխատանքային հարաբերությունները շարունակելու մասին տեղեկատվության պարբերաբար ստացում գործատուից և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը.

20) գործատուների հետ համագործակցության գործնական արդյունքների և հնարավորությունների համալիր վերլուծության արդյունքներով՝ այդ գործընթացների պլանավորման ու իրականացման արդյունավետության և հասցեականության բարձրացման վերաբերյալ առաջարկությունների մշակում:

IV. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

9. Տարածքային կենտրոնի հետ համագործակցող գործատուների մասին տեղեկատվությունը հավաքագրվում, տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությունը ճշգրտվում և թարմացվում է սույն կարգով, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից (այսուհետ՝ նախարար) հաստատված՝ գործատուների գրանցամատյանի ձևաչափին համապատասխան:

10. Զբաղվածության գործակալը տարածքային կենտրոնի հետ որոշակի համագործակցություն չունեցող և (կամ) նոր գրանցված (հաշվառված) գործատուների մասին տեղեկատվությունը հավաքագրում է հետևյալ հիմնական աղբյուրներից և մուտքագրում գործատուների գրանցամատյանում՝

1) իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող կենտրոնից՝ առցանց եղանակով, շաբաթական կտրվածքով.

2) գործատու հանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց ինտերնետային կայքէջերից՝ յուրաքանչյուր աշխատանքային օր կատարելով համապատասխան մշտադիտարկում.

3) տարածքային կենտրոնի հետ համագործակցող՝ աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններից՝ ամսական կտրվածքով և այդ կազմակերպությանն առավել հարմար եղանակով.

4) զանգվածային լրատվության միջոցներից և այլ հնարավոր աղբյուրներից՝ յուրաքանչյուր աշխատանքային օր կատարելով համապատասխան մշտադիտարկում:

11. Գործատուի հետ կապի հաստատման՝ սույն կետում նշված եղանակները նախապես

քննարկվում են գործատուի հետ, և կատարվում է գործատուի համար առավել արդյունավետ եղանակի (եղանակների) համատեղ ընտրություն՝

1) զբաղվածության գործակալի կողմից գործատուին այցելություն.

2) գործատուի (գործատուի ներկայացուցչի) կողմից տարածքային կենտրոն այցելություն և հանդիպում զբաղվածության գործակալին.

3) կապի հաստատում հեռախոսով, ֆաքսով, էլեկտրոնային փոստով և հնարավոր՝ այլ նմանատիպ եղանակներով:

12. Տարածքային կենտրոնը (զբաղվածության գործակալը) գործատուի հետ բուն համագործակցության շրջանակներում՝

1) գործատուին ներկայացնում է տեղեկատվություն տարածքային կենտրոնում հաշվառված՝ աշխատանք փնտրող անձանց մասին (մասնագիտությունը, որակավորումը, աշխատանքային փորձը, այդ թվում՝ մասնագիտական, սեռը, տարիքը, հարմար աշխատանքի վերաբերյալ առաջարկության չափանիշները)՝ ըստ գործատուի ներկայացրած կոնկրետ հետաքրքրությունների և պահանջների.

2) գործատուին ամփոփ ներկայացնում է ծրագրերը և տրամադրում խորհրդատվություն այդ ծրագրերում ընդգրկվելու մեխանիզմների վերաբերյալ (ծրագրի անվանումը, հիմնական նպատակը, գործատուի հնարավորությունը ծրագրի միջոցով առկա և սպասվող թափուր աշխատատեղը համալրելու առումով, ծրագրի շահառուների շրջանակը) և, ըստ գործատուի ներկայացրած հետաքրքրության, մանրամասնում է կոնկրետ ծրագրի կազմակերպման և իրականացման հնարավորություններն ու մեխանիզմները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան.

3) գործատուին ներկայացնում է տեղեկատվություն աշխատաշուկայի վիճակի և միտումների մասին.

4) գործատուից հավաքագրում է տեղեկատվություն առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, ինչպես նաև սպասվելիք կառուցվածքային փոփոխությունների և այլ միջոցառումների մասին, որոնց հետևանքով կարող են տեղի ունենալ աշխատանքից ազատումներ, այդ թվում՝ զանգվածային, ընդ որում, առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի մասին հայտի օրինակելի ձևը հաստատում է նախարարը.

5) գործատուի հետ քննարկում է թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի մասին տրամադրված տեղեկատվության հրապարակման՝ գործատուի համար ընդունելի տարբերակը, որի արդյունքում նշված տեղեկատվությունը կարող է՝

ա. մուտքագրվել նախարարության տեղեկատվական շտեմարանում և հրապարակվել գործակալության պաշտոնական կայքէջում, զանգվածային լրատվության միջոցներով՝ նշելով գործատուի մասին տեղեկատվությունը,

բ. մուտքագրվել նախարարության տեղեկատվական շտեմարանում և հրապարակվել գործակալության պաշտոնական կայքէջում, զանգվածային լրատվության միջոցներով՝ առանց գործատուի մասին տեղեկատվությունը նշելու,

գ. մուտքագրվել միայն նախարարության տեղեկատվական շտեմարանում՝ տարածքային կենտրոններ այցելած աշխատանք փնտրողներին տրամադրելու նպատակով.

6) գործատուի և համապատասխան աշխատանք փնտրող անձանց հետ վարվող բանակցությունների արդյունքում ձեռք է բերում կոնկրետ պայմանավորվածություններ՝ գործատուի

մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղը համալրելու նպատակով՝

ա. տարածքային կենտրոնի կողմից համապատասխան աշխատանք փնտրող անձին կամ անձանց գործատուի մոտ ուղեգրելու վերաբերյալ, իսկ նման հնարավորության սպառման կամ բացակայության դեպքում՝

բ. աշխատանք փնտրող անձի (անձանց) ներգրավմամբ բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պետական կոնկրետ ծրագիրը գործատուի հետ համատեղ իրականացնելու վերաբերյալ.

7) գործատուի և աշխատատեղերի կրճատման հիմքով աշխատանքից ազատման իրական ռիսկ ունեցող աշխատողի (աշխատողների) հետ վարվող բանակցությունների արդյունքում գործատուին ներկայացնում է խորհրդատվություն՝ աշխատատեղերի կրճատման հիմնական պատճառների՝ արտադրության ծավալների կրճատման, արտադրության տեխնոլոգիական, կառուցվածքային, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխությունների հնարավորինս մեղմման և վերացման նպատակով.

8) գործատուների մասին հավաքագրված ու գործատուներից ստացված տեղեկատվությունը վերլուծում է՝ ըստ յուրաքանչյուր գործատուի, որի հիման վրա կատարում է գործատուի հետ համագործակցության ձևերի և հնարավորությունների առաջնահերթությունների համալիր գնահատում.

9) սույն կետի 8-րդ ենթակետում նշված գնահատման արդյունքներով նախանշում է գործատուի հետ համագործակցության վերաբերյալ կոնկրետ առաջարկություն (աշխատանք փնտրող անձին աշխատանքի տեղավորելու նպատակով գործատուի մոտ ուղեգրում, համատեղ ծրագիր)՝ նախապես ընտրված աշխատանք փնտրող անձի (անձանց) ներգրավմամբ, և ներկայացնում է գործատուին՝ հաշվի առնելով հետևյալ հիմնական գործոնները՝

ա. գործատուի մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղի (աշխատատեղերի) թիվը և դրանց վերաբերյալ գործատուի ներկայացրած պայմաններն ու պահանջները,

բ. առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղը (աշխատատեղերը) տարածքային կենտրոնում հաշվառված՝ աշխատաշուկայում անմրցունակ՝ աշխատանք փնտրող անձանցով համալրելու առաջնային անհրաժեշտությունը,

գ. տարածքային կենտրոնում հաշվառված՝ աշխատանք փնտրող անձանց և գործատուի մոտ առկա թափուր և (կամ) նոր ստեղծվող աշխատատեղերի վերաբերյալ գործատուի ներկայացրած պայմանների համապատասխանության կամ այդ համապատասխանությունը համատեղ կոնկրետ ծրագրի արդյունքում ապահովելու հնարավորությունների ընդհանուր գնահատականները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատանք փնտրող անձին «հարմար աշխատանքի» վերաբերյալ առաջարկության չափանիշները,

դ. որպես առաջնային հնարավորություն՝ նախապես ընտրված աշխատանք փնտրող անձին աշխատանքի տեղավորման նպատակով գործատուի մոտ ուղեգրումը և միայն նման հնարավորության սպառման կամ բացակայության պարագայում՝

ե. գործատուի մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղը (աշխատատեղերը) տարածքային կենտրոնում հաշվառված՝ աշխատանք փնտրող անձով համալրելու նպատակով՝ համատեղ կոնկրետ ծրագրային առաջարկության դիտարկումը.

10) հիմք ընդունելով սույն կետի 9-րդ ենթակետում նշված գործոնները՝ նախապես ընտրում է աշխատանք փնտրող անձին (անձանց) և աշխատանքի տեղավորման նպատակով ուղեգրում է

գործատուի մոտ՝ սույն կարգի 13-րդ կետում նկարագրված ընթացակարգով.

11) սույն կետի 10-րդ ենթակետով նախատեսված հնարավորության բացակայության կամ սպառման դեպքում կազմակերպում է տարածքային կենտրոնի, գործատուի և աշխատանք փնտրող անձի միջև եռակողմ բանակցություններ, դրանց արդյունքում գործատուի հետ վերջնական ճշտված համագործակցության վերաբերյալ կոնկրետ առաջարկության հիման վրա կազմում է համապատասխան ծրագրի մասին հայտի նախագիծ և ներկայացնում տարածքային կենտրոնի տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

12) գործնականում ապահովում է ծրագրի մասին հայտի հիման վրա տարածքային կենտրոնի, գործատուի և աշխատանք փնտրող անձի միջև կնքված եռակողմ պայմանագրի իրականացումը.

13) ապահովում է գործատուի հետ հետադարձ կապը համատեղ ծրագրի իրականացման ընթացքում և դրա ավարտից հետո՝ հիմք ընդունելով ծրագրի կայուն զբաղվածության ցուցանիշի չափանիշը.

14) սույն կարգի 8-րդ կետի 15-րդ ենթակետում նշված՝ աշխատանքից ազատման իրական ռիսկ ունեցող աշխատողների աշխատանքային հարաբերությունները շարունակելու մասին տեղեկատվությունն ստանում է գործատուից և դրա մասին համապատասխան նշում է կատարում գործատուի գրանցամատյանում:

13. Զբաղվածության գործակալն աշխատանքի տեղավորման նպատակով աշխատանք փնտրող անձին գործատուի մոտ ուղեգրում է հետևյալ ընթացակարգով՝

1) գործատուի ներկայացրած պահանջներին՝ աշխատանք փնտրող անձի մասնագիտության և որակավորման համապատասխանության գնահատում.

2) գործատուի ներկայացրած թափուր աշխատատեղի պայմաններն աշխատանք փնտրող անձին մանրամասն ներկայացնելը և քննարկելը.

3) գործատուի մոտ ուղեգրվող՝ աշխատանք փնտրող անձին առաջարկվող աշխատանքի՝ հարմար աշխատանքի չափանիշներին համապատասխանության գնահատում և դրա մասին իրազեկում աշխատանք փնտրող անձին.

4) աշխատանք փնտրող անձի համաձայնության ստացում.

5) գործատուի և աշխատանք փնտրող անձի հետ ուղեգրման վայրի և ժամկետների վերաբերյալ կոնկրետ պայմանավորվածության ձեռքբերում.

6) աշխատանք փնտրող անձի այցելություն գործատուին (ըստ անհրաժեշտության՝ զբաղվածության գործակալի ուղեկցությամբ).

7) գործատուից ուղեգրման արդյունքների մասին տեղեկատվության ստացում.

8) ուղեգրման և դրա արդյունքների մասին տեղեկատվության մուտքագրում գործատուների գրանցամատյանում:

14. Զբաղվածության գործակալը գործատուի հետ համատեղ ծրագրի իրականացման, ինչպես նաև ուղեգրման արդյունքում գործատուի մոտ աշխատանքի տեղավորված՝ աշխատանք փնտրող անձանց աշխատանքային հարաբերությունները շարունակելու մասին տեղեկատվությունը պարբերաբար հավաքագրում է գործատուից և այդ տեղեկատվությունն ստանալուց հետո անմիջապես մուտքագրում է գործատուների գրանցամատյանում:

15. Աշխատանքի տեղավորված աշխատանք փնտրող անձի աշխատանքային հարաբերությունները շարունակելու մասին տեղեկատվության ստացման տևողությունը և պարբերականությունը որոշվում են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության

կառավարության սահմանած՝ զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգի ու գնահատման կարգը և ծրագրի կայուն զբաղվածության ցուցանիշի չափանիշը:

16. Զբաղվածության գործակալը գործատուների մասին հավաքագրած ու գործատուներից ստացած տեղեկատվությունը մուտքագրում է նախարարության կողմից վարվող տեղեկատվական համակարգում, գործատուների գրանցամատյանում և պարբերաբար թարմացնում է այն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

17. Գործատուն զանգվածային ազատումների դեպքում դրա մասին տեղեկատվությունը տարածքային կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 116-րդ հոդվածով սահմանված դեպքերում և ժամկետներում:

18. Տարածքային կենտրոնը գործատուների հետ կապի հաստատումը, այդ թվում՝ գործատուի փաստացի գործունեության վայր այցելությունը կազմակերպում և իրականացնում է համաձայն նախարարի հաստատած տարեկան պլան-ժամանակացույցի:

19. Գործատուների հետ համագործակցության ամփոփ ցուցանիշները, այդ թվում՝ գործատուներից ստացված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, զանգվածային ազատումների մասին տեղեկատվությունը՝ ըստ մարզերի ինքնաշխատ եղանակով արտածվում են նախարարության կողմից վարվող տեղեկատվական համակարգից:

V. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ

20. Տարածքային կենտրոնը, սույն կարգին համապատասխան, գործատուների հետ համագործակցության շրջանակներում բացում, վարում և պարբերաբար թարմացնում է գործատուների էլեկտրոնային գրանցամատյանը:

21. Գործատուների գրանցամատյանը ներառում է հետևյալ հիմնական տեղեկությունները՝

1) ընդհանուր տեղեկություններ՝

ա. գործատուի գրանցամատյանի համարը,

բ. գործատուի գրանցամատյանի բացման ամսաթիվը,

գ. գործատուի գրանցամատյանի փակման ամսաթիվը (գործատուի գրանցամատյանը փակվում է իրավաբանական անձ հանդիսացող գործատուի լուծարման դեպքում, ինչպես նաև ֆիզիկական անձ հանդիսացող գործատուի գործունեության դադարման դեպքում),

դ. տարածքային կենտրոնի անվանումը,

ե. զբաղվածության գործակալի (գործակալների) անունը, ազգանունը.

2) գործատուի մասին ընդհանուր տեղեկություններ՝

ա. իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող գործատուի անվանումը (անունը, ազգանունը), հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), պետական գրանցման ամսաթիվը, գործատուի (գործատուի ներկայացուցչի) անունը, ազգանունը, իրավաբանական անձի համար՝ նաև կազմակերպաիրավական ձևը,

բ. ֆիզիկական անձ հանդիսացող գործատուի անունը, ազգանունը, անձնագրի կամ նույնականացման քարտի համարը, առաջին անգամ որպես գործատու հանդես գալու ամսաթիվը,

գ. գործատուի աշխատողների թիվը,

դ. գործատուի գործունեության հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը,

կայքէջը,

ե. տարածքային կենտրոնի հետ համագործակցության վերաբերյալ գործատուի տեսակետը՝ ունի ցանկություն, հրաժարվել է համագործակցությունից, հնարավոր է ապագա համագործակցությունը, գ. համագործակցության ցանկության դեպքում՝ գործատուի ակնկալիքները.

3) կապի հաստատման՝ գործատուի համար առավել արդյունավետ եղանակի (եղանակների) վերաբերյալ համապատասխան նշում, այդ թվում՝

ա. զբաղվածության գործակալի կողմից գործատուին այցելություն,

բ. գործատուի (գործատուի ներկայացուցչի) կողմից տարածքային կենտրոն այցելություն,

գ. հեռահար կապի հաստատում՝ հեռախոսով, ֆաքսով, էլեկտրոնային փոստով և հնարավոր այլ նմանատիպ եղանակներով.

4) ծրագրերի, ինչպես նաև տարածքային աշխատաշուկայի վիճակի վերաբերյալ տրամադրված խորհրդատվության արդյունքների մասին ամփոփ տեղեկատվություն (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. գործատուի կողմից հետաքրքրության արժանացած ծրագրեր,

բ. նոր աշխատողների ներգրավման հավանական պահանջարկ՝ ըստ թվի, մասնագիտության, որակավորման, աշխատանքային փորձի, սեռի, տարիքի.

5) գործատուի կողմից ներկայացված աշխատատեղերի մասին տեղեկատվություն (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. առկա թափուր աշխատատեղերը և նոր ստեղծվող (առավելագույնն առաջիկա երեք ամսվա ընթացքում) աշխատատեղերը,

բ. աշխատատեղերի նախատեսվող կրճատումները (առաջիկա մեկ տարվա ընթացքում)՝ կրճատման որոշակի ժամկետ, կրճատվող աշխատատեղի անվանումը, աշխատատեղերի կրճատման հիմքով աշխատանքից ազատման ենթակա աշխատողի մասնագիտությունը, որակավորումը, սեռը, տարիքը.

6) գործատուի ներկայացրած առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերը տարածքային կենտրոնի կողմից հրապարակման հնարավոր ձևերը՝

ա. գործակալության պաշտոնական կայքէջում տեղադրում՝ առանց գործատուի մասին ընդհանուր տեղեկությունների,

բ. գործակալության պաշտոնական կայքէջում տեղադրում՝ գործատուի մասին ընդհանուր տեղեկությունների հետ միասին,

գ. զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար հրապարակում՝ առանց գործատուի մասին ընդհանուր տեղեկությունների,

դ. զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար հրապարակում՝ գործատուի մասին ընդհանուր տեղեկությունների հետ միասին,

ե. տարածքային կենտրոն այցելած՝ աշխատանք փնտրող անձին այդ տեղեկատվությունը ներկայացնելը.

7) աշխատատեղերի հնարավոր կրճատումների պատճառները՝ յուրաքանչյուրի կանխարգելման ու վերացման վերաբերյալ զբաղվածության գործակալի գործնական առաջարկությունների հետ միասին (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. արտադրության ծավալների կրճատում,

բ. արտադրության տեխնոլոգիական, կառուցվածքային, աշխատանքի կազմակերպման

պայմանների փոփոխություններ,

գ. գործատուի սնանկացում,

դ. այլ հնարավոր պատճառներ (նշվում է պատճառը).

8) աշխատատեղերի կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ գործատուից գրավոր ծանուցում ստացած աշխատողի աշխատանքային հարաբերությունների մասին տեղեկատվությունը, որը գործատուից հավաքագրվում է ծանուցման ժամկետը լրանալուց հետո՝ անմիջապես (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. աշխատողի անունը, հայրանունը, ազգանունը,

բ. աշխատանքային հարաբերությունները շարունակվում են՝ համաձայն աշխատանքային պայմանագրի,

գ. աշխատանքային հարաբերությունները շարունակվում են՝ առավել ոչ բարենպաստ աշխատանքային պայմաններով,

դ. աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատանքի էական պայմանները փոփոխվելու հիմքով,

ե. աշխատանքային պայմանագիրը լուծվել է գործատուի նախաձեռնությամբ.

9) ըստ գործատուի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածության՝ գործատուին ներկայացված համագործակցության կոնկրետ առաջարկությունները (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. համապատասխան աշխատանք փնտրող անձի (անձանց) ուղեգրումը գործատուի մոտ (ուղեգրման ժամկետները, ուղեգրվող անձանց թիվը), իսկ նման հնարավորության սպառման կամ բացակայության պարագայում՝

բ. ծրագրի համատեղ իրականացումը՝ նշելով յուրաքանչյուրին առաջարկվող կոնկրետ ծրագրի անվանումը, ծրագրում ընդգրկման ենթակա՝ աշխատանք փնտրող անձանց թիվը, ծրագրի արդյունքում աշխատանքի տեղավորման ենթակա անձանց թիվը.

10) սույն կետի 9-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված առաջարկության վերաբերյալ գործատուի հետ ձեռք բերված կոնկրետ պայմանավորվածության համաձայն՝ զբաղվածության գործակալի կողմից նախապես ընտրված՝ աշխատանք փնտրող անձի՝ գործատուի մոտ ուղեգրումը (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. առկա թափուր կամ նոր ստեղծվող կոնկրետ աշխատատեղի համար ուղեգրված աշխատանք փնտրող անձի անունը, հայրանունը, ազգանունը, հաշվառման քարտի համարը,

բ. ըստ յուրաքանչյուր ուղեգրված անձի ուղեգրման արդյունքը՝ գործատուի կողմից մերժում, աշխատանք փնտրող անձի կողմից մերժում (համապատասխան դեպքում առանձին նշվում է՝ «հրաժարվել է իրեն առաջարկված հարմար աշխատանքից»), աշխատանքի տեղավորում.

11) գործատուի, զբաղվածության գործակալի և աշխատանք փնտրող անձի միջև կազմակերպված բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա տարածքային կենտրոնի, գործատուի և աշխատանք փնտրող անձի միջև կնքված եռակողմ պայմանագրով նախատեսված ծրագրի պայմանները և իրականացման արդյունքները բնութագրող տեղեկատվությունը՝

ա. ծրագրի անվանումը, եռակողմ պայմանագրի համարը, կնքման ամսաթիվը և գործողության ժամկետը,

բ. ծրագրում ընդգրկվող՝ աշխատանք փնտրող անձի անունը, հայրանունը, ազգանունը,

զբաղվածության ապահովման անհատական ծրագրի (այսուհետ՝ անհատական ծրագիր) համարը և զբաղվածության կարգավիճակը՝ աշխատանք փնտրող անձ, այդ թվում՝ գործազուրկ, նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձ, աշխատաշուկայում անմրցունակ անձ,

գ. ծրագրի արդյունքում՝ ծրագրում ներգրավված անձանցից աշխատանքի տեղավորման ենթակա անձանց թիվը,

դ. ծրագրի արդյունքում աշխատանքի տեղավորված անձի անունը, հայրանունը, ազգանունը, անհատական ծրագրի համարը և զբաղվածության կարգավիճակը՝ աշխատանք փնտրող անձ, այդ թվում՝ գործազուրկ, նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձ, աշխատաշուկայում անմրցունակ անձ.

12) ծրագրի իրականացման, ինչպես նաև տարածքային կենտրոնի կողմից ուղեգրման արդյունքում գործատուի մոտ աշխատանքի տեղավորված՝ աշխատանք փնտրող անձի աշխատանքային հարաբերությունները շարունակելու մասին տեղեկատվությունը (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)

ա. աշխատանքի տեղավորված անձի անունը, հայրանունը, ազգանունը, անհատական ծրագրի համարը,

բ. աշխատանքային հարաբերությունները շարունակվում են՝ համաձայն կնքված աշխատանքային պայմանագրի,

գ. աշխատանքային հարաբերությունները շարունակվում են՝ առավել բարենպաստ աշխատանքային պայմաններով,

դ. աշխատանքային հարաբերությունները շարունակվում են՝ ոչ բարենպաստ աշխատանքային պայմաններով,

ե. աշխատանքային պայմանագիրը լուծվել է գործատուի նախաձեռնությամբ,

զ. աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատողի նախաձեռնությամբ,

է. աշխատանքային պայմանագիրը լուծվել է կողմերի համաձայնությամբ,

ը. աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատանքի էական պայմանները փոփոխվելու հիմքով,

թ. աշխատանքային պայմանագիրը լուծվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այլ հիմքերով (նշվում է համապատասխան հիմքը՝ հղումով):

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 10
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Ձև

Գործատուի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը _____

ՈՒՂԵԳԻՐ N

ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԱՓՈՒՐ ԵՎ ՆՈՐ ՍՏԵՂԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԸ
ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ

Հարգելի _____
(կազմակերպության ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը)

Ձեր կազմակերպությունում աշխատողների պահանջարկի մասին տեղեկություններին համապատասխան՝ ուղարկվում է _____
_____ -ը
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____ մասնագիտությամբ,
(անվանումը)

գրադեցնելու համար _____ պաշտոնը:
(անվանումը)

Խնդրում եմ 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Ձեր կողմից ընդունված որոշման մասին:

_____ (գրադրվածության տարածքային կենտրոնի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը)

S
ՆՕՐԵՆ _____
(ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Տրվել է ----- 20 թ.

Կ. Տ.

_____ գրադրվածության տարածքային
(ընդգծել) կենտրոնի տնօրենին

(անվանումը)

ՊԱՏԱՄԽԱՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. _____ -ը N _____ ուղեգրով
(ազգանունը, անունը, հայրանունը)

1) ընդունվել է աշխատանքի 20 թվականի -----ին,

_____ N _____ 20 թվականի _____.
(աշխատանքի ընդունվելու մասին փաստաթղթի տեսակը) (համարը) (ամսաթիվը)

2) չի ընդունվել աշխատանքի _____ :
(պատճառը)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

(ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ) _____
(ստորագրությունը)

(անուն, ազգանուն)

----- 20 թ.

Գործատուի ՀՎՀՀ

Կ. Տ.

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Կ Ա Ր Գ

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՌԻՍԿ ՈՒՆԵՑՈՂ՝ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոններում (այսուհետ՝ տարածքային կենտրոն) հաշվառված և մասնագիտական պատրաստման, վերամասնագիտացման ու մասնագիտական որակավորման բարձրացման (այսուհետ՝ մասնագիտական ուսուցում) դասընթացներին մասնակցելու ցանկություն հայտնած գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց (այսուհետ՝ ունկնդիր) մասնագիտական ուսուցման հետ կապված հարաբերությունները:

2. Մասնագիտական ուսուցման նպատակն ունկնդրին աջակցելն է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու միջոցով հարմար աշխատանքի տեղավորման, աշխատանքից ազատման ռիսկի նվազեցման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հարցերում:

3. Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերին համապատասխան:

4. Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է, երբ՝

1) աշխատաշուկայում բացակայում է ունկնդրի մասնագիտական կրթությանը համապատասխան հարմար աշխատանքը. այս դեպքում կազմակերպվում է վերամասնագիտացման դասընթաց.

2) ունկնդրի մասնագիտական որակավորումը չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին. այս դեպքում կազմակերպվում է մասնագիտական որակավորման բարձրացման դասընթաց.

3) ունկնդիրը չունի մասնագիտական կրթություն և որակավորում. այս դեպքում կազմակերպվում է նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման դասընթաց:

5. Մասնագիտական ուսուցումը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ միջոցներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Մասնագիտական ուսուցումն իրականացվում է՝

1) սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպության կողմից.

2) սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում՝ այլ միջոցների հաշվին ուսուցումն

իրականացնող կազմակերպության կողմից:

7. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական ուսուցումն իրականացվում է՝ հաշվի առնելով նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինների (վերափորձաքննության բաժին) կողմից կազմված հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագիրը:

8. Մասնագիտական ուսուցման դասընթացների տևողությունը չի կարող գերազանցել 3 ամիսը, իսկ սույն կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետում նշված նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման դեպքում՝ 6 ամիսը:

9. Ունկնդրին՝ իր բնակության վայրի համայնքից դուրս այլ համայնք (բացառությամբ Երևան քաղաքի վարչական շրջանների) մասնագիտական ուսուցման ուղեգրելու դեպքում փոխհատուցվում են տրանսպորտային ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսված չափերով:

10. Մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված մեկ ունկնդրի հաշվով կատարվող ծախսը չպետք է գերազանցի զբաղվածության ամենամյա պետական ծրագրերում մեկ անձի համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը:

11. Ունկնդիրը կարող է մեկ տարվա ընթացքում մասնակցել մասնագիտական ուսուցման մեկ դասընթացի, ընդ որում, եթե ունկնդիրների թիվը գերազանցում է տարածքային կենտրոնի համար տվյալ տարվա զբաղվածության ամենամյա պետական ծրագրով նախատեսված անձանց թիվը, ապա դասընթացում ընդգրկվելու նախապատվությունը «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տրվում է աշխատաշուկայում անմրցունակ անձանց, ավելի վաղ հաշվառվածներին՝ ըստ հաշվառման հերթականության: Նույն անձը կարող է ընդգրկվել մասնագիտական ուսուցման մեկից ավելի դասընթացներում, եթե տվյալ դասընթացում առաջին անգամ ընդգրկվելու ցանկություն հայտնող չի եղել:

12. Եթե ծրագրում ընդգրկվելու ցանկություն ունեցող շահառուների թիվը գերազանցում է տարածքային կենտրոնի՝ տվյալ տարվա զբաղվածության ամենամյա պետական ծրագրով նախատեսված շահառուների թիվը, ապա ընդգրկվելու նախապատվությունը տրվում է առավել երկար ժամկետով հաշվառված անմրցունակ անձանց:

13. Մասնագիտական ուսուցման ծրագրերի, ուսումնական պլանի, մասնագիտական ուսուցման ձևի ընտրության (խմբային կամ անհատական), դասընթացների իրականացման, ավարտական քննությունների կազմակերպման և վկայականների հանձնման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մասնագիտական ուսուցում իրականացնող կազմակերպության հետ կնքված պայմանագրով:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

14. Մասնագիտական ուսուցման դասընթացներին մասնակցելու ցանկություն հայտնած անձանց՝ տարածքային կենտրոնի կողմից մատուցվում են հետևյալ ծառայությունները՝

1) մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվություն.

2) աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների և տարածքային կենտրոնի կողմից կազմակերպվող մասնագիտական ուսուցման դասընթացների մասին տեղեկությունների տրամադրում:

15. Տարածքային կենտրոնը, հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը և ունկնդրի ցանկությունը, կազմում և գործակալություն է ներկայացնում մասնագիտական ուսուցման կազմակերպման մասին հայտ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը (այսուհետ՝ նախարար):

16. Գործակալությունն իր իրավասության սահմաններում, տարածքային կենտրոններից ստացված հայտերի հիման վրա, կազմակերպում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով մասնագիտական ուսուցման ծառայությունների գնման գործընթացի իրականացումը, որի արդյունքում սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված կազմակերպության հետ կնքվում է համապատասխան պայմանագիր:

17. Գործակալությունը սույն կարգի 16-րդ կետում նշված պայմանագրի պատճենը տրամադրում է տարածքային կենտրոնին:

18. Տարածքային կենտրոնը պայմանագրի պատճենն ստանալուց հետո ունկնդրին ծանոթացնում է մասնագիտական ուսուցման դասընթացի պայմանների, ուսուցում իրականացնող կազմակերպության ներքին կարգապահական կանոնների հետ և տալիս մասնագիտական ուսուցման ուղեգիր, որի ձևը սահմանում է նախարարը:

19. Տարածքային կենտրոնի կողմից մասնագիտական ուսուցման դասընթացին ունկնդրի մասնակցելու վերաբերյալ առաջարկության, այն ընդունելու կամ դրանից հրաժարվելու, ինչպես նաև դրանցից բխող գործազուրկի կարգավիճակի կասեցման և վերականգնման վերաբերյալ նշում է կատարվում աշխատանք փնտրող անձի անհատական ծրագրում:

20. Գործակալությունը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը նախարարության աշխատակազմ է ներկայացնում սույն ծրագրի ծախսերի նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ):

21. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

22. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգում:

III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻՆ ՎՃԱՐՎՈՂ ԿՐԹԱԹՈՇԱԿԸ

23. Բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերի շրջանակներում մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված գործազուրկներին ուսուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տրվում է կրթաթոշակ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի 50 տոկոսի չափով, որի վճարման գործընթացն

իրականացնում է տարածքային կենտրոնը:

24. Մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված գործազուրկները բանկային հաշիվ չունենալու դեպքում եռօրյա ժամկետում առևտրային բանկում բացում են բանկային հաշիվ և տարածքային կենտրոն են ներկայացնում հայտարարություն իրենց բանկային հաշվի տվյալների մասին:

25. Մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված անձանց կրթաթոշակը վճարվում է այդ անձանց մասնագիտական ուսուցման գործուղելու օրվանից հաշված յուրաքանչյուր ամսվա համար. ամսվա հաշվարկը կատարվում է ըստ օրացուցային օրերի (այսուհետ՝ ուսումնական ամիս):

26. Կրթաթոշակն անձին տրամադրվում է տվյալ ուսումնական ամսվա ընթացքում նրա ուսուցմանը մասնակցած օրերին համապատասխան, մասնակցության օրերի մասին տեղեկատվությունը տարածքային կենտրոնին է տրամադրվում ուսուցումն իրականացնող կազմակերպության կողմից (այսուհետ՝ կազմակերպություն)՝ յուրաքանչյուր ուսումնական ամսվա վերջին աշխատանքային օրը:

27. Մասնագիտական ուսուցման դասընթացների գործուղված անձանց կրթաթոշակը վճարվում է տարածքային կենտրոնի կողմից գործակալություն ներկայացված հայտի հիման վրա:

IV. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

28. Սույն կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետում նշված կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) գրավոր դիմում է գործակալություն՝ ներկայացնելով ուսումնական ծրագիրը, դրա իրականացման պայմանները և դասընթացներում ընդգրկվողների թիվը:

29. Գործակալությունը կազմակերպության հետ նախապես քննարկում է մասնագիտական ուսուցման կազմակերպման հետ կապված հարցերը և նախարարություն է ներկայացնում առաջարկություն քննարկում կազմակերպելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ, իսկ նախարարությունը կազմակերպության հետ քննարկում է մասնագիտական ուսուցման կազմակերպման հետ կապված հարցերը և կնքում է պայմանագիր, որի տեխնիկական բնութագրի պատճենը գործակալությունը տրամադրում է տարածքային կենտրոնին:

30. Տարածքային կենտրոնը կազմակերպության կողմից իրականացվող դասընթացին մասնակցելու ցանկություն հայտնած ունկնդրին ծանոթացնում է մասնագիտական ուսուցման դասընթացի պայմանների, ուսուցում իրականացնող կազմակերպության ներքին կարգապահական կանոնների հետ և տալիս մասնագիտական ուսուցման՝ սույն կարգի 18-րդ կետում նշված ուղեգիրը:

31. Դասընթացն սկսվելուց հետո մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 5-ը կազմակերպությունը տարածքային կենտրոն է ներկայացնում տեղեկանք նախորդ ամսվա ընթացքում դասընթացին ունկնդիրների մասնակցության մասին:

V. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

32. Մասնագիտական ուսուցման ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Մասնագիտական ուսուցման ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. ուսուցումն ավարտելուց հետո 3 ամսվա ընթացքում

աշխատանքի տեղավորված և մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատված անձանց թվի տարբերությունը հարաբերվում է մասնագիտական ուսուցումն ավարտածների ընդհանուր թվին և արտահայտվում է տոկոսով: Աշխատանքից ազատվածների թվից հանվում է այն անձանց թիվը, որոնք աշխատանքից ազատվելուց հետո տասնօրյա ժամկետում տեղավորվել են աշխատանքի: Ընդ որում, մասնագիտական ուսուցման ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 12
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոններում (այսուհետ՝ տարածքային կենտրոն) հաշվառված՝ ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկների (այսուհետ՝ գործազուրկ)՝ գործատուի մոտ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցություն տրամադրելու ծրագրի հետ (այսուհետ՝ ծրագիր) կապված հարաբերությունները:

2. Ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է:

3. Գործազուրկը մեկ անգամ կարող է մասնակցել ծրագրին՝ առավելագույնը 3 ամիս տևողությամբ, մասնագիտական կրթություն և որակավորում ստանալուց հետո՝ առավելագույնը 3 տարվա ընթացքում:

4. Եթե գործազուրկների թիվը գերազանցում է տարածքային կենտրոնի համար տվյալ տարվա զբաղվածության ամենամյա պետական ծրագրով նախատեսված շահառուների թիվը, ապա ծրագրում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է առավել պահանջարկ ունեցող մասնագիտությամբ գործազուրկներին, իսկ նույն մասնագիտությամբ գործազուրկներից՝ ավելի վաղ հաշվառվածներին՝ ըստ հաշվառման հերթականության:

II. ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

5. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Ծրագիրն իրականացվում է տարածքային կենտրոնի կողմից վարվող համապատասխան բանակցությունների արդյունքում ընտրված գործատուի կողմից, որի արդյունքում՝ գործատուի, գործազուրկի և գործազուրկին հաշվառած տարածքային կենտրոնի միջև կնքվում է ծրագրի կազմակերպման մասին եռակողմ պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), որի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը (այսուհետ՝ նախարար):

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված պայմանագիրը կնքելուց հետո գործատուն գործազուրկի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Ծրագրի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված միջոցներից վճարվում է՝

1) գործազուրկին աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով.

2) գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին՝ նրա նախորդ տարվա միջին ամսական աշխատավարձի 20 տոկոսի չափով հավելում, բայց ոչ ավելի, քան սույն կետում նշված նվազագույն ամսական աշխատավարձի չափը.

3) գործատուին գումար՝ գործազուրկի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը փոխհատուցելու համար:

9. Ծրագիրը սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված միջոցներով ֆինանսավորվելու դեպքում՝ գործատուին տրվող փոխհատուցման չափը չի կարող փոքր լինել սույն կարգի 8-րդ կետում նշված միջոցների չափից:

10. Տարածքային կենտրոնը գրանցում է գործազուրկի մասնագիտության (պաշտոնի) անվանումը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 872-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության՝ Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգչի կողերին համապատասխան, ուղարկում անհատական տվյալների համադրման (նախարարության կողմից վարվող համապատասխան տեղեկատվական շտեմարանի միջոցով)՝ մասնագիտական աշխատանքային փորձի բացակայությունը ճշտելու նպատակով:

11. Տարածքային կենտրոնը սույն կարգի 6-րդ կետում նշված պայմանագրի պատճենը և գործազուրկների ցուցակը պայմանագիրը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է գործակալություն: Ընդ որում, գործազուրկների ցուցակում նշվում են գործազուրկի՝

1) անունը և ազգանունը.

2) անձնագրի սերիան և համարը.

3) կրթության մասին վկայականը տալու տարեթիվը.

4) մասնագիտության` սույն կարգի 10-րդ կետում նշված կողմ.

5) հանրային ծառայությունների համարանիշը կամ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից գործազուրկին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը, իսկ դրանց բացակայության դեպքում` սոցիալական ապահովության քարտը:

12. Սյն դեպքում, երբ գործազուրկն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տվյալների փոխարեն ցուցակում լրացվում են օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի` Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթի (կացության քարտի) սերիան ու համարը, իսկ փախստականի կարգավիճակ ունեցող անձի համար` կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի սերիան ու համարը:

13. Տարածքային կենտրոնները գործակալություն են ներկայացնում ծրագրի համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը` նախարարի հաստատած ձևին համապատասխան:

14. Գործակալությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում ծրագրի բաշխումն ըստ տարածքային կենտրոնների հաստատելուց հետո կազմում և նախարարության աշխատակազմի հաստատմանն է ներկայացնում ըստ տարածքային կենտրոնների ծախսերի նախահաշիվները:

15. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ըստ տարածքային կենտրոնների ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

16. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգում:

17. Տարածքային կենտրոնը ծրագրի դիմաց փոխհատուցման ենթակա միջոցները ծրագրի իրականացման նպատակով կնքված պայմանագրի կողմ հանդիսացող գործատուի բանկային հաշվին փոխանցելու համար` պայմանագրի կողմ հանդիսացող գործատուի կողմից ծառայությունների մատուցման մասին պայմանագրով նախատեսված` կատարած վճարումների մասին տեղեկությունները (վճարման ցուցակների պատճեններով կամ տեղեկանքով), մասնագիտական փորձի տրամադրման ընթացքում գործազուրկի հաճախումների մասին տեղեկատվությունն ստանալուց և հաստատելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմում և իրեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունք է ներկայացնում պարտավորության ձևավորման համար սահմանված փաստաթղթերի փաթեթը:

18. Ծրագիրն սկսելուց հետո մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 5-ը գործատուն տարածքային կենտրոն է ներկայացնում տեղեկանք նախորդ ամսվա ընթացքում ծրագրին գործազուրկների մասնակցության մասին:

19. Սույն կարգի պահանջների խախտմամբ տրամադրված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն կարգի 6-րդ կետում նշված պայմանագիրը ժամկետից շուտ (բացառությամբ գործազուրկի` ծրագրից հեռացման կամ աշխատանքի տեղավորվելու դեպքերի) դադարեցվելու կամ պայմանագրով նախատեսված` գործազուրկին աշխատավարձ չվճարելու դեպքում գործատուի կողմից վերադարձվում են պայմանագրով նախատեսված միջոցները:

III. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

20. Տվյալ տարվա ընթացքում իրականացվելիք ծրագրի մասին տեղեկատվությունն արտացոլվում է գործակալության պաշտոնական կայքէջում և նախարարության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում:

21. Տարածքային կենտրոնը տեղեկատվությունը տեղադրում է իր գտնվելու վայրում՝ գործազուրկի համար տեսանելի տեղում, իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում տեղակայված լինելու դեպքում՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում:

22. Ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց տարածքային կենտրոնի կողմից տրամադրվում է ծրագրի պայմանների վերաբերյալ խորհրդատվություն:

23. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագիրն ավարտելուց հետո 3 ամսվա ընթացքում աշխատանքի տեղավորված և մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատված անձանց թվի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկվածների ընդհանուր թվին և արտահայտվում տոկոսով: Աշխատանքից ազատվածների թվից հանվում է այն անձանց թիվը, ովքեր աշխատանքից ազատվելուց հետո տասնօրյա ժամկետում տեղավորվել են աշխատանքի: Ընդ որում, ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 13
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԳՈՐԾԱԶՈՒՐԿԻՆ ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱՂՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոն) առաջարկությամբ այլ վայրում գործազուրկներին աշխատանքի տեղավորման աջակցության (այսուհետ՝ ծրագիր) տրամադրման հետ կապված

հարաբերությունները:

2. Ծրագրի նպատակն աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերում (բացառությամբ Երևան քաղաքի), մասնավորապես, գյուղական բնակավայրերում և սահմանամերձ տարածաշրջաններում շարունակաբար չլրացվող թափուր աշխատատեղերի համալրումն ու կայուն զբաղվածության ապահովումն է:

3. Սույն կարգի իմաստով՝ այլ վայրում աշխատանքի տեղավորումը տարածքային կենտրոնի առաջարկությամբ գործազուրկի՝ բնակության վայրից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ բնակավայրում աշխատանքի տեղավորումն է:

4. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Գործազուրկը ծրագրում կարող է ընդգրկվել մեկ անգամ՝ առնվազն երկու տարի ժամկետով:

6. Ծրագրի շրջանակներում թափուր աշխատատեղը գործազուրկին կարող է առաջարկվել միայն այն դեպքում, եթե տարածքային կենտրոնում տվյալ աշխատատեղի մասին տեղեկատվությունն ստացվելուց հետո այն առնվազն մեկ ամիս չի համալրվել:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Յուրաքանչյուր ամիս տեղեկատվական շտեմարանից ինքնաշխատ եղանակով արտաձվում է առնվազն մեկ ամիս թափուր մնացած աշխատատեղերի մասին տեղեկատվությունը և նույն եղանակով տեղադրվում ծրագրի էլեկտրոնային գրանցամատյանում և գործակալության կայքէջում:

8. Տարածքային կենտրոնը յուրաքանչյուր ամիս տարածքային կենտրոնի վարչական շենքի տեսանելի վայրում տեղադրում է առնվազն մեկ ամիս թափուր մնացած աշխատատեղերի մասին տեղեկատվությունը՝ նշելով գործատուի հասցեն, աշխատանքի բնույթը, պահանջվող մասնագիտական որակավորումը, աշխատանքի պայմանները, աշխատաժամանակը և աշխատավարձի չափը:

9. Ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած գործազուրկին տարածքային կենտրոնի կողմից տրամադրվում է խորհրդատվություն այլ վայրում առկա թափուր աշխատատեղերի, ծրագրով նախատեսված աջակցության չափի և տրամադրման պայմանների վերաբերյալ:

10. Ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած գործազուրկը գրավոր դիմում է տարածքային կենտրոն՝ նշելով մարզի, համայնքի, գործատուի և թափուր աշխատատեղի անվանումները:

11. Եթե գործազուրկին առաջարկվող աշխատանքը գտնվում է գործազուրկին հաշվառած տարածքային կենտրոնի սպասարկման տարածքում, ապա տվյալ տարածքային կենտրոնի տնօրենը գործատուի հետ քննարկում է թափուր աշխատատեղը գործազուրկով համալրելու, գործատուի, գործազուրկի և տարածքային կենտրոնի հետ եռակողմ պայմանագիր կնքելու հետ կապված հարաբերությունները:

12. Եթե գործազուրկին առաջարկվող աշխատանքը գտնվում է գործազուրկին հաշվառած տարածքային կենտրոնի սպասարկման տարածքից դուրս գտնվող համայնքում, ապա տարածքային կենտրոնը գործազուրկի դիմումի պատճենը և անհատական ծրագրի (հաշվառման քարտի) քաղվածքը՝ կից գրությամբ ուղարկում է տվյալ գործատուին սպասարկող տարածքային կենտրոն:

Վերջինս գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղն այլ համայնքի գործազուրկով համալրելու, գործատուի, գործազուրկի և տարածքային կենտրոնի հետ եռակողմ պայմանագիր կնքելու հետ կապված հարցերը քննարկում է գործատուի հետ: Տարածքային կենտրոնը քննարկման արդյունքների մասին եռօրյա ժամկետում տեղեկատվություն է տրամադրում իրեն դիմած տարածքային կենտրոնին:

13. Թափուր աշխատատեղը գործազուրկով համալրելու և առնվազն 2 տարի տվյալ գործատուի մոտ աշխատելու հարցում տարածքային կենտրոնի և գործատուի միջև համաձայնություն ձեռք բերվելու դեպքում՝ գործազուրկի, գործատուի և գործազուրկին հաշվառած տարածքային կենտրոնի միջև կնքվում է թափուր աշխատատեղը համալրելու մասին եռակողմ պայմանագիր, որի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը (այսուհետ՝ նախարար), ընդ որում, գործազուրկին սեզոնային աշխատանքով ապահովելու դեպքում յուրաքանչյուր տարվա ընթացքում աշխատած ամիսների թիվը գումարվում է և պետք է կազմի առնվազն 24 ամիս:

14. Սույն կարգի 13-րդ կետում նշված պայմանագիրը կնքելուց հետո գործատուն գործազուրկի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

III. ԳՈՐԾԱԶՈՒՐԿԻՆ ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

15. Այլ վայրում աշխատանքի տեղավորման դեպքում՝ գործազուրկին և նրա հետ մեկնող ընտանիքի անդամներին հատուցվում են՝

1) իր և իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսերը՝ միայն միկրոավտոբուսային երթուղի լինելու դեպքում՝ միկրոավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով, իսկ միկրոավտոբուսային և ավտոբուսային երթուղիներ լինելու դեպքում՝ ավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով.

2) իր և իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը՝ 30-50 կիլոմետր ճանապարհի համար՝ 10000 դրամ, 50 կիլոմետրից ավելի յուրաքանչյուր 50 կիլոմետրի համար՝ 8000 դրամ, բայց ոչ ավելի, քան 50000 դրամը:

16. Այլ վայրում աշխատանքի տեղավորման դեպքում՝ գործազուրկին տրվում է՝

1) միանվագ ֆինանսական աջակցություն՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված ամսական աշխատավարձի եռապատիկի չափով.

2) մեկ տարվա ընթացքում 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախս՝ միկրոավտոբուսային երթուղի լինելու դեպքում՝ միկրոավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով, իսկ միկրոավտոբուսային և ավտոբուսային երթուղիներ լինելու դեպքում՝ ավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով.

3) ամսական գումար՝ բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված ամսական աշխատավարձի չափով, 2 տարի ժամկետով.

4) աշխատավարձի հավելում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսից մինչև կրկնապատիկի չափով, վեց ամիս ժամկետով, հաշվի առնելով թափուր աշխատատեղերի՝ ըստ մասնագիտությունների լրացման առաջնահերթությունները, ընդ որում, ըստ մասնագիտությունների աշխատավարձի հավելման չափերը սահմանում է նախարարը:

IV. ԾՐԱԳՐՈՎ ԼԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

17. Ծրագրում ընդգրկված անձը սույն կարգի 13-րդ և 14-րդ կետերում նշված պայմանագրերի կնքումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում առևտրային բանկում բացում է բանկային հաշիվ և իրեն հաշվառած տարածքային կենտրոն է ներկայացնում հայտարարություն նոր բնակության վայրի հասցեի և բանկային հաշվի տվյալների մասին:

18. Տարածքային կենտրոնը սույն կարգի 17-րդ կետում նշված հայտարարության հիման վրա կազմում և 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ կից գրությամբ գործակալություն է ներկայացնում ֆինանսավորման մասին հայտ-պահանջագիրը, որի ձևը հաստատում է նախարարը: Կից գրության մեջ նշվում են տվյալ անձին ֆինանսական միջոցներ տրամադրելու հիմնավորումը, ինչպես նաև բանկային հաշվի համարը:

19. Գործակալությունը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը նախարարության աշխատակազմ է ներկայացնում ծրագրի ծախսերի նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ):

20. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

21. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգում:

22. Սույն կարգի պահանջների խախտմամբ տրամադրված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

23. Այլ վայրում աշխատանքի տեղավորման դեպքում՝ գործազուրկին հատուցված նյութական ծախսերը ենթակա են վերադարձման՝

1) գործատուի կողմից, եթե գործատուի և գործազուրկի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է գործատուի նախաձեռնությամբ՝ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո երկու տարվա ընթացքում.

2) գործազուրկի կողմից, եթե պայմանագիրը լուծվել է գործազուրկի նախաձեռնությամբ՝ պայմանագիրը կնքելուց հետո երկու տարվա ընթացքում.

3) գործատուի և գործազուրկի կողմից հավասարապես, եթե աշխատանքային պայմանագիրը լուծվել է կողմերի համաձայնությամբ՝ պայմանագիրը կնքելուց հետո երկու տարվա ընթացքում:

24. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագրի արդյունքում աշխատանքի տեղավորվածների և ծրագիրն ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թվերի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թվին և արտահայտվում տոկոսով: Ընդ որում, ծրագրի կայուն

զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 14
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱԶՈՒՐԿԻ ԱՆՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների կողմից (այսուհետ՝ տարածքային կենտրոն) աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատաշուկայում գործազուրկին անմրցունակ ճանաչելու պայմաններն են՝

1) անձի հաշմանդամություն ունենալու հանգամանքը՝ ըստ հաշմանդամություն ունեցող անձին նախարարության աշխատակազմի բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմնի կողմից տրված՝ հաշմանդամության փաստը հավաստող տեղեկանքի՝

ա. անձն ունի 1-ին խմբի հաշմանդամություն,

բ. անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ.

2) անձի սոցիալական կարգավիճակը՝ հետևյալ հանգամանքներով պայմանավորված՝

ա. ընտանիքը հաշվառված է սոցիալապես անապահով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում (անհրաժեշտ տեղեկատվությունը տարածքային կենտրոնի կողմից ստացվում է էլեկտրոնային եղանակով՝ նախարարության կողմից ձևավորված և վարվող համապատասխան տեղեկատվական շտեմարանից, կամ անձը ներկայացնում է համապատասխան տեղեկանք),

բ. ընտանիքն ստանում է ընտանեկան նպաստ (անհրաժեշտ տեղեկատվությունը տարածքային կենտրոնի կողմից ստացվում է էլեկտրոնային եղանակով՝ նախարարության կողմից ձևավորված և վարվող համապատասխան տեղեկատվական շտեմարանից, կամ անձը ներկայացնում է համապատասխան տեղեկանք),

գ. վերադարձել է ազատազրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից և վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է տարածքային կենտրոնում,

դ. հաշվառված է արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում և գտնվում է դադարի (ռեմիսիայի) շրջանում,

ե. թրաֆիքինգի զոհ է.

3) անձի տարիքը՝

ա. գտնվում է 16-30 տարիքային խմբում,

բ. գտնվում է 31-63 տարիքային խմբում.

4) անձի՝ գործազուրկի կարգավիճակում գտնվելու ժամանակահատվածը՝

ա. երեք ամսվանից մինչև մեկ տարի,

բ. մեկ տարվանից ավելի.

5) անձի բնակության վայրը՝

ա. սահմանամերձ, գյուղական,

բ. սահմանամերձ, քաղաքային,

գ. լեռնային կամ բարձրլեռնային, գյուղական,

դ. լեռնային կամ բարձրլեռնային, քաղաքային.

6) անձի փախստական լինելու հանգամանքը և այդ կարգավիճակում գտնվելու ժամանակահատվածը՝

ա. երեք ամսվանից մինչև մեկ տարի,

բ. մեկ տարվանից ավելի.

7) անձի արտագնա աշխատանքի մեկնելու ռիսկը՝

ա. վերադարձել է արտերկրից, սակայն վերադառնալուց հետո մեկ տարվա ընթացքում չի կարողացել դառնալ զբաղված,

բ. վերջին երեք տարվա ընթացքում մեկից ավելի անգամ մեկնել է արտերկիր և յուրաքանչյուր անգամ մեկնման երկրում բնակվել է մեկ ամսվանից ավելի,

գ. վերջին երեք տարվա ընթացքում մեկ տարվանից ավելի բնակվել է արտերկրում.

8) անձի՝ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելու հանգամանքը՝

ա. նախկինում չի աշխատել կամ աշխատել է մինչև մեկ ամիս տևողությամբ,

բ. նախկինում չի աշխատել իր մասնագիտությամբ (որակավորմամբ) կամ իր մասնագիտությամբ (որակավորմամբ) աշխատել է մինչև մեկ ամիս տևողությամբ.

9) անձի՝ աշխատանք գտնելու կամ մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու հնարավորությունները՝

ա. չունի մասնագիտություն (որակավորում) և տարածքային կենտրոնում գրավոր հայտարարել է, որ ընտանեկան վիճակից և (կամ) անձնական հանգամանքներով պայմանավորված՝ չունի մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու հնարավորություն,

բ. ունի մասնագիտություն (որակավորում), սակայն տարածքային կենտրոնում հաշվառվելուց հետո երեք ամսվա ընթացքում աշխատաշուկայում համապատասխան պահանջարկի բացակայության դեպքում կենտրոնին չի հաջողվել նրան տեղավորել հարմար աշխատանքի՝ անձի մասնագիտական կրթությանը և որակավորմանը համապատասխան.

10) անձը խնամում է իր՝ մինչև երեք տարեկան երեխային.

11) անձը վերադարձել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից և վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է կենտրոնում:

3. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված՝ աշխատաշուկայում գործազուրկին անմրցունակ ճանաչելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաստող տեղեկանքները և այլ փաստաթղթեր տարածքային կենտրոն են ներկայացվում գործազուրկի կողմից՝ բացառությամբ այն տեղեկատվության, որն արդեն իսկ առկա է տարածքային կենտրոնում կամ նախարարության

կողմից ձևավորված և վարվող համապատասխան տեղեկատվական շտեմարաններում:

4. Սույն կարգի 5-րդ կետով սահմանված դեպքերում՝ գործազուրկը ճանաչվում է անմրցունակ, և տարածքային կենտրոնի կողմից համապատասխան նշում է կատարվում գործազուրկի զբաղվածության ապահովման անհատական ծրագրում՝ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը գործազուրկի կողմից տարածքային կենտրոն ներկայացվելու օրվանից, և շարունակում է համարվել աշխատաշուկայում անմրցունակ, քանի դեռ գործազուրկի համար առկա են համապատասխան պայմաններ:

5. Գործազուրկը ճանաչվում է աշխատաշուկայում անմրցունակ, եթե միաժամանակ առկա են սույն կարգի 2-րդ կետով նախատեսված հետևյալ պայմանները՝

1) անձն ունի 1-ին խմբի հաշմանդամություն.

2) անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և վերադարձել է ազատագրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից և վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է տարածքային կենտրոնում.

3) անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և հաշվառված է արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում և գտնվում է դադարի (ռեմիսիայի) շրջանում.

4) անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և թրաֆիքինգի զոհ է.

5) անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և գտնվում է 16-30 տարիքային խմբում.

6) անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

7) անձի ընտանիքը հաշվառված է սոցիալապես անապահով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և անձը գտնվում է 16-30 տարիքային խմբում.

8) անձի ընտանիքը հաշվառված է սոցիալապես անապահով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և անձը մեկ տարվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

9) անձի ընտանիքն ստանում է ընտանեկան նպաստ.

10) անձը վերադարձել է ազատագրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից ու վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է տարածքային կենտրոնում և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

11) անձը հաշվառված է արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում, գտնվում է դադարի (ռեմիսիայի) շրջանում և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

12) անձը թրաֆիքինգի զոհ է և գտնվում է 16-30 տարիքային խմբում.

13) անձը թրաֆիքինգի զոհ է և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

14) անձը փախստական է և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

15) անձը 16-30 տարիքային խմբում է և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

16) անձը 31-63 տարիքային խմբում է և մեկ տարվանից ավելի գտնվում է գործազուրկի

կարգավիճակում.

17) անձը բնակվում է կամ սահմանամերձ, գյուղական կամ սահմանամերձ, քաղաքային կամ լեռնային կամ բարձրլեռնային, գյուղական կամ լեռնային կամ բարձրլեռնային, քաղաքային վայրերում.

18) անձը վերադարձել է արտերկրից, սակայն վերադառնալուց հետո մեկ տարվա ընթացքում չի կարողացել դառնալ զբաղված կամ վերջին երեք տարվա ընթացքում մեկից ավելի անգամ մեկնել է արտերկիր և յուրաքանչյուր անգամ մեկնման երկրում բնակվել է մեկ ամսվանից ավելի կամ վերջին երեք տարվա ընթացքում մեկ տարվանից ավելի բնակվել է արտերկրում.

19) անձը նախկինում չի աշխատել կամ աշխատել է մինչև մեկ ամիս տևողությամբ կամ նախկինում չի աշխատել իր մասնագիտությամբ (որակավորմամբ) կամ իր մասնագիտությամբ (որակավորմամբ) աշխատել է մինչև մեկ ամիս տևողությամբ.

20) անձը չունի մասնագիտություն (որակավորում) և տարածքային կենտրոնում գրավոր հայտարարել է, որ, ընտանեկան վիճակով և (կամ) անձնական հանգամանքներով պայմանավորված, չունի մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու հնարավորություն կամ ունի մասնագիտություն (որակավորում), սակայն տարածքային կենտրոնում հաշվառվելուց հետո երեք ամսվա ընթացքում աշխատաշուկայում համապատասխան պահանջարկի բացակայության դեպքում կենտրոնին չի հաջողվել նրան տեղավորել հարմար աշխատանքի՝ անձի մասնագիտական կրթությանը և որակավորմանը համապատասխան.

21) անձը խնամում է իր՝ մինչև երեք տարեկան երեխային.

22) անձը վերադարձել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից և վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է կենտրոնում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 15
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ
ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆ
ՈՒՂԵԿՑՈՂԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոն) միջնորդությամբ աշխատաշուկայում

անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման, ինչպես նաև տեսողությունից կամ տեղաշարժման (հաշմանդամի սայլակով տեղաշարժվող) խնդիրներով առաջին խմբի հաշմանդամություն ունեցող (այսուհետ՝ ուղեկցողի կարիք ունեցող) անձանց ծրագրում ընդգրկելու դեպքում՝ ուղեկցողի համար հաշմանդամություն ունեցող անձին աշխատավարձի մասնակի փոխհատուցման աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Աջակցության տրամադրման նպատակն է գործատուի կողմից անմրցունակ անձանց տրվող աշխատավարձի մասնակի փոխհատուցման միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց (այսուհետ՝ անմրցունակ անձ) աշխատանքի տեղավորվելուն նպաստելը և այդ ճանապարհով կայուն զբաղվածության ապահովումը:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց ծրագրում ընդգրկելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ աշխատանք փնտրող անձի կարիքների գնահատման կարգով նախատեսված ամփոփ եզրակացությունը, այդ թվում՝ ուղեկցող ունենալու անհրաժեշտությունը:

II. ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

4. Աջակցությունը տրամադրվում է այն գործատուներին, որոնք տարածքային կենտրոնի միջնորդությամբ անմրցունակ անձանց իրենց մոտ տեղավորում են հարմար աշխատանքի:

5. Աջակցությունը տրամադրվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Աջակցությունը տրամադրվում է անմրցունակ անձանց գործատուի կողմից վճարվող աշխատավարձը մասնակի փոխհատուցելու միջոցով:

7. Հարմար աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անմրցունակ անձի համար վեց օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով, գործատուին տրվում է փոխհատուցում՝ տվյալ անմրցունակ անձի համար սահմանված ամսական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը:

8. Ուղեկցողի համար ուղեկցողի կարիք ունեցող անձանց տրվում է աշխատավարձի փոխհատուցում (այսուհետ՝ փոխհատուցում) մինչև վեց օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով:

9. Աջակցությունը տրամադրվում է ամսվա լրիվ աշխատած օրերի համար, ընդ որում, ոչ լրիվ աշխատած ամսվա համար փոխհատուցման գումարի չափը հաշվարկվում է՝ փոխհատուցման ամսական գումարը բաժանելով տվյալ ամսվա աշխատանքային օրերի թվի վրա և բազմապատկելով լրիվ աշխատած օրերի թվով:

10. Հարմար աշխատանքի տեղավորված անմրցունակ անձի՝ ժամանակավոր անաշխատունակության և նպատակային արձակուրդում գտնվելու ժամանակահատվածների

համար գործատուին, ինչպես նաև ուղեկցողի կարիք ունեցող անձին, փոխհատուցում չի տրամադրվում:

11. Տարածքային կենտրոնն աջակցություն տրամադրելու նպատակով բանակցում է համապատասխան թափուր աշխատատեղի հայտը ներկայացրած գործատուի հետ՝ ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած անձի մասնակցությամբ: Բանակցությունների արդյունքում ձեռք բերված վերջնական համաձայնության հիման վրա գործատուի, տարածքային կենտրոնի և ծրագրի շահառուի միջև կնքվում է անմրցունակ անձի աշխատավարձը փոխհատուցելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ չորս օրինակից, առնվազն մեկ ու կես տարի ժամկետով, որից 6 ամիսն աջակցության տրամադրման ժամանակահատվածն է:

12. Եթե գործատուն համաձայնել է հարմար աշխատանքի ընդունել մեկից ավելի անմրցունակ անձանց, ապա տարածքային կենտրոնի և տվյալ գործատուի միջև կնքվում է մեկ պայմանագիր:

13. Սույն կարգի 11-րդ կետով նախատեսված պայմանագրի օրինակելի ձևը հաստատվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով:

14. Պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում տարածքային կենտրոնը նախարարության կողմից ձևավորված և վարվող տեղեկատվական շտեմարանում (այսուհետ՝ տեղեկատվական շտեմարան) մուտքագրում է՝

1) պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարեթիվը.

2) պայմանագրի կողմ հանդիսացող գործատուի անվանումը (ֆիզիկական անձ հանդիսացող գործատուի անունը, ազգանունը), հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում).

3) պայմանագրով նախատեսված՝ հարմար աշխատանքի ընդունման ենթակա անմրցունակ անձանց թիվը (այդ թվում՝ ուղեկցողի կարիք ունեցող անձանց թիվը):

15. Գործատուն անմրցունակ անձի հետ աշխատանքային պայմանագիրը կնքելուց կամ անմրցունակ անձին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտն ստորագրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով (տեղեկատվական շտեմարանի կամ գործակալության պաշտոնական կայքէջի կամ էլեկտրոնային փոստի միջոցով) դրա մասին ծանուցում է տարածքային կենտրոնին:

16. Տարածքային կենտրոնը սույն կարգի 15-րդ կետում նշված աշխատանքային պայմանագիրը կնքելուց կամ անմրցունակ անձին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում անմրցունակ անձից ստանում է դրանց պատճենները և մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկատվական շտեմարանում մուտքագրում է աշխատանքային պայմանագրի վերաբերյալ հետևյալ տվյալները՝

1) աշխատանքային պայմանագրի կնքման (անհատական իրավական ակտի ընդունման) օրը, ամիսը, տարեթիվը, համարը.

2) անմրցունակ անձի աշխատանքի ընդունման օրը, ամիսը, տարեթիվը.

3) անմրցունակ անձի անունը, ազգանունը.

4) գործատուի լրիվ անվանումը (ֆիզիկական անձ հանդիսացող գործատուի անունը, ազգանունը).

5) այն պաշտոնի անվանումը, որում աշխատանքի է նշանակվել անմրցունակ անձը կամ անմրցունակ անձի աշխատանքային գործառույթները.

6) անմրցունակ անձի աշխատավարձի չափը.

7) աշխատանքային պայմանագրի (կամ անհատական իրավական ակտի) գործողության ժամկետը:

17. Ուղեկցողի կարիք ունեցող անձը, բանկային հաշիվ չունենալու դեպքում, եռօրյա ժամկետում բացում է բանկային հաշիվ և իրեն հաշվառած տարածքային կենտրոն է ներկայացնում հայտարարություն իր բանկային հաշվի տվյալների մասին:

18. Յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը գործատուն տարածքային կենտրոն է ներկայացնում նախարարի կողմից հաստատված ձևին համապատասխան տեղեկանք՝ տվյալ ամսվա ընթացքում իր մոտ աշխատող այն անմրցունակ անձանց մասին, որոնց համար պայմանագիր է կնքվել տարածքային կենտրոնի հետ, և որոնց աշխատանքի ընդունելու մասին սույն կարգի 15-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան, նախապես ծանուցել է տարածքային կենտրոնին:

19. Գործատուից և ուղեկցողի կարիք ունեցող անձից ստացած՝ սույն կարգի 18-րդ կետերում նշված տեղեկանքի և տեղեկատվական շտեմարանում մուտքագրված տվյալների համադրման արդյունքում տարածքային կենտրոնը կազմում և մինչև տվյալ ամսվա հինգը գործակալություն է ներկայացնում՝

1) նախորդ ամսվա ընթացքում աշխատանքի ընդունված այն անմրցունակ անձանց (այդ թվում՝ ուղեկցողի կարիք ունեցող) ցուցակը, որոնց համար պայմանագիր է կնքվել համապատասխան գործատուների հետ.

2) աջակցության և փոխհատուցման համար ֆինանսական միջոցների՝ նախարարի սահմանած ձևին համապատասխան հայտ-պահանջագիրը՝ համապատասխանաբար ըստ գործատուների և ըստ ուղեկցողի կարիք ունեցող անձանց:

20. Սույն կարգի 19-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ցուցակում նշվում են՝

1) անմրցունակ անձի (այդ թվում՝ ուղեկցողի կարիք ունեցող) անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը.

2) հանրային ծառայությունների համարանիշը, իսկ այն չունենալու դեպքում՝ սոցիալական քարտի համարը.

3) յուրաքանչյուր անմրցունակ անձի (այդ թվում՝ ուղեկցողի կարիք ունեցող) աշխատավարձի փոխհատուցվող չափը.

4) փոխհատուցվող աշխատավարձերի ընդհանուր չափը.

5) անմրցունակ անձին աշխատանքի ընդունած գործատուի անվանումը (ֆիզիկական անձ հանդիսացող գործատուի անունը, ազգանունը) և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում, գործատուի մասին սույն ենթակետով սահմանված տվյալները լրացվում են յուրաքանչյուր անմրցունակ անձի համար առանձին: Ուղեկցող ունենալու դեպքում ցուցակում նշվում է նաև ուղեկցողի կարիք ունեցող անձի անունը, ազգանունը, հայրանունը, փաստացի բնակության վայրը, բանկի համապատասխան մասնաճյուղի անվանումը, բանկային հաշվի համարը:

21. Այն դեպքում, երբ աշխատանքի ընդունված անմրցունակ անձն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա սույն կարգի 20-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տվյալների փոխարեն ցուցակում լրացվում է օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, իսկ փախստականի կարգավիճակ ունեցող անձի համար՝

կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի սերիան ու համարը: Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անմրցունակ անձը ձեռք չի բերել (չունի) հանրային ծառայությունների համարանիշ կամ սոցիալական ապահովության քարտ, ապա սույն կարգի 20-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տվյալների փոխարեն ցուցակում լրացվում է բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից անմրցունակ անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը:

22. Գործակալությունը սույն կարգի 19-րդ կետով նախատեսված ցուցակները և նախարարի հաստատած ձևին համապատասխան ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը տարածքային կենտրոնների կողմից ստանալուց հետո իրականացնում է դրանցում ներառված տվյալների ուսումնասիրություն: Վրիպակների, սխալների բացակայության դեպքում գործակալությունը կազմում և նախարարության աշխատակազմ է ներկայացնում նախարարի հաստատած ձևին համապատասխան և ըստ տարածքային կենտրոնների ամփոփված՝ աշխատավարձերի մասնակի փոխհատուցումը ֆինանսավորելու մասին հայտ-պահանջագիրը՝ ոչ ուշ, քան տարածքային կենտրոնների կողմից ցուցակները և ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

23. Գործակալությունը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը նախարարության աշխատակազմ է ներկայացնում սույն ծրագրի ծախսերի նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ):

24. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

25. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգ:

26. Տարածքային կենտրոնը գումարը երկու աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով՝ վճարման հանձնարարականով փոխանցում է գործատուի, ինչպես նաև ուղեկցողի կարիք ունեցող անձի բանկային հաշվի համարներին:

27. Այն դեպքում, երբ զբաղվածության պետական համապատասխան ծրագրում ընդգրկվելու իրավունք ունեցող՝ տարածքային կենտրոնում հաշվառված անմրցունակ անձանց թիվը գերազանցում է այդ տարածքային կենտրոնի համար զբաղվածության պետական տվյալ ծրագրով նախատեսված անմրցունակ անձանց թիվը, ապա տվյալ ծրագրում ընդգրկվելու նախապատվությունը տրամադրվում է ավելի վաղ հաշվառված անմրցունակ անձանց՝ ըստ հաշվառման հերթականության՝ հաշվի առնելով նաև գործատուների կողմից ներկայացված՝ թափուր և (կամ) նոր ստեղծվող աշխատատեղերը լրացնելու համար աշխատողների մասնագիտական որակավորմանը և աշխատանքային ստաժին ներկայացվող պահանջները:

III. ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՈՉ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼԸ

28. Աջակցությունը դադարեցվում է՝

1) սույն կարգի 7-րդ կետով նախատեսված ժամկետի ավարտից հետո.

2) գործատուի և անմրցունակ անձի միջև կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի ավարտից կամ անմրցունակ անձին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտով նախատեսված ժամկետի ավարտից շուտ աշխատանքային հարաբերությունները դադարելու դեպքում:

3) գործատու իրավաբանական անձի լուծարման կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող գործատուի գործունեության դադարեցման դեպքում:

4) անմրցունակ անձի մահվան դեպքում:

29. Սույն կարգի 28-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերում կամ աշխատողների թվի և (կամ) հաստիքների կրճատման հիմքով անմրցունակ անձին աշխատանքից ազատելու դեպքում, նույն անմրցունակ անձի համար կարող է կնքվել աշխատավարձի փոխհատուցման մասին նոր պայմանագիր այլ գործատուի հետ՝ աշխատավարձի փոխհատուցման մասին նախորդ պայմանագրով չիրացված ժամկետով:

30. Անմրցունակ անձին տրվող աշխատավարձը մասնակի փոխհատուցելու համար գործատուին տրամադրված, ինչպես նաև զբաղվածության պետական համապատասխան ծրագրի իրականացման համար ծախսված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման՝ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով:

31. Գործատուին և անմրցունակ անձին հատուցված նյութական ծախսերը ենթակա են վերադարձման՝

1) գործատուի կողմից, եթե գործատուի և անմրցունակ անձի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է գործատուի նախաձեռնությամբ՝ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո մեկուկես տարվա ընթացքում:

2) անմրցունակ անձի կողմից, եթե պայմանագիրը լուծվել է անմրցունակ անձի նախաձեռնությամբ՝ պայմանագիրը կնքելուց հետո մեկուկես տարվա ընթացքում:

3) գործատուի և անմրցունակ անձի կողմից հավասարապես, եթե աշխատանքային պայմանագիրը լուծվել է կողմերի համաձայնությամբ (Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդված)՝ պայմանագիրը կնքելուց հետո մեկուկես տարվա ընթացքում:

IV. ՏԵՂԵԿՍՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

32. Աջակցության տրամադրման մասին տեղեկատվությունն արտացոլվում է գործակալության պաշտոնական կայքէջում և տեղեկատվական շտեմարանում՝ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, այլ օրենքներին և իրավական ակտերին համապատասխան:

33. Տարածքային կենտրոնն իր գտնվելու վայրում՝ անմրցունակ անձանց համար տեսանելի տեղում, իսկ տարածքային կենտրոնը համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում տեղակայված լինելու դեպքում՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում, տեղադրում է տեղեկատվություն զբաղվածության պետական համապատասխան ծրագրի վերաբերյալ, որով նախատեսվում է գործատուներին աջակցության տրամադրում՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման համար:

34. Տարածքային կենտրոնը տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման համար գործատուներին աջակցության տրամադրում նախատեսող զբաղվածության պետական համապատասխան ծրագրի մասին, իրազեկում է դրանում ընդգրկվելու համար անհրաժեշտ պայմանների և կարգի վերաբերյալ:

35. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագիրն ավարտելուց հետո ծրագրում ներառվածների և 1 տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թվի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թվին և արտահայտվում է տոկոսով: Ընդ որում, ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 16
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ՓՈՔՐ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոն) կողմից աշխատաշուկայում անմրցունակ անձանց ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցություն տրամադրելու (այսուհետ՝ ծրագիր) հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրի նպատակը փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն ու աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության իրականացման և ինքնազբաղվածության խթանման համար աջակցության տրամադրումն է, ինչպես նաև լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը:

3. Ծրագրի շահառուներն են աշխատաշուկայում անմրցունակ անձինք (այսուհետ՝ անմրցունակ անձ):

4. Անմրցունակ անձը ծրագրում կարող է ընդգրկվել մեկ անգամ:

5. Ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության առավելագույն արժեքը մեկ միլիոն

դրամ է:

6. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Տվյալ տարվա ընթացքում իրականացվող ծրագրի մասին տեղեկատվությունն արտացոլվում է գործակալության պաշտոնական կայքում, յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ ինքնաշխատ տարածվում է նախարարության տեղեկատվական շտեմարանում նախնական գրանցված կամ հաշվառված անմրցունակ անձանց և աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների առկա էլեկտրոնային հասցեներով, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով:

8. Տարածքային կենտրոնը տեղեկատվությունը հրապարակում է իր գործունեության վայրում՝ այցելուների համար տեսանելի տեղում, իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում տեղակայված լինելու դեպքում՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում: Համալիր սոցիալական ծառայություններում տեղակայված տարածքային կենտրոնների աշխատողները սոցիալական դեպքի վարման շրջանակներում տարածում են նաև ծրագրի վերաբերյալ տեղեկատվական թերթոններ:

9. Ծրագրի իրականացման նպատակով տարածքային կենտրոնն անմրցունակ անձին տրամադրում է խորհրդատվություն՝ ծրագրում ընդգրկվելու գործընթացների մասին, այդ թվում՝ տարածքային կենտրոն ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ:

10. Տվյալ տարվա ընթացքում իրականացվող ծրագրում ընդգրկվողների առնվազն 30 տոկոսը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող գործազուրկներ:

11. Տարածքային կենտրոնը ծրագրում ընդգրկվելու ցանկություն ունեցող անմրցունակ անձանց ցուցակը ներկայացնում է գործակալություն՝ ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

12. Գործակալությունն ամփոփում է տարածքային կենտրոններից ստացված ցուցակները և երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ (այսուհետ՝ ՓՄՁ ԶԱԿ):

13. Նախարարությունը ՓՄՁ ԶԱԿ-ի հետ կնքում է ծրագրի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ համագործակցության վերաբերյալ պայմանագիր, համաձայն որի՝

1) ՓՄՁ ԶԱԿ-ը տրամադրում է գործակալության կողմից ուղարկված անմրցունակ անձանց՝ ծրագրի շրջանակներում ակնկալվող ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցություն՝ խորհրդատվություն, ուսուցում, ձեռնարկատիրական գործունեության գործարար ծրագրի (այսուհետ՝ գործարար ծրագիր) մշակում.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աջակցությունն անմրցունակ անձին տրամադրվում է՝

ա. ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող Սկսնակ գործարարներին աջակցության ծրագրի շրջանակներում՝ դրա իրականացման ժամանակացույցին համապատասխան,

բ. սույն ենթակետի «ա» պարբերությունում նշված շրջանակներից դուրս` ծրագրով նախատեսված միջոցներից ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված հատկացման հաշվին աջակցություն կարող են ստանալ անմրցունակ անձանց ոչ ավելի, քան 25 տոկոսը.

3) ՓՄՁ ԶԱԿ-ի գնահատման հանձնաժողովը եզրակացություն է տալիս անմրցունակ անձի գործարար ծրագրի վերաբերյալ.

4) ՓՄՁ ԶԱԿ-ի գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկվում է համապատասխան տարածքային կենտրոնի մեկ ներկայացուցիչ.

5) ՓՄՁ ԶԱԿ-ը ամսական պարբերականությամբ էլեկտրոնային հաշվետվություններ է ներկայացնում գործակալություն` սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված եզրակացությունների վերաբերյալ:

14. ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից դրական եզրակացություն ստացած գործարար ծրագրի մեկ օրինակը և այդ եզրակացությունն անմրցունակ անձը տարածքային կենտրոն է ներկայացնում եզրակացությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Տարածքային կենտրոնի տնօրենը գործարար ծրագիրն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է անձին աջակցություն տրամադրելու վերաբերյալ որոշում և անձի հետ կնքում է ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրման պայմանագիր (այսուհետ` պայմանագիր)` Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի (այսուհետ` նախարար) հրամանով հաստատված օրինակելի ձևին համապատասխան:

15. Անմրցունակ անձը սույն կարգի 14-րդ կետում նշված պայմանագիրը կնքելուց հետո եռօրյա ժամկետում իրեն հաշվառած տարածքային կենտրոն է ներկայացնում հայտարարություն իր բանկային հաշվի տվյալների մասին:

16. Տարածքային կենտրոնի կողմից տրամադրվող աջակցությունը ներառում է հետևյալ ծախսերի փոխհատուցումը`

1) ծրագրում որպես վարձու աշխատողներ ներգրավված անձանց անվանական աշխատավարձի 25 տոկոսը, բայց ոչ ավելի, քան մեկ վարձու աշխատողի համար «Նվազագույն աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի 50 տոկոսը` երկու տարի ժամկետով, ամսական կտրվածքով.

2) ծրագրով անմրցունակ անձի կողմից հիմնական միջոց հանդիսացող սարքավորումների ձեռքբերման նպատակով այդ սարքավորումների ընդհանուր արժեքի 50 տոկոսը` միանվագ:

17. Տարածքային կենտրոնները գործակալություն են ներկայացնում ծրագրի համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը` նախարարի հաստատած ձևին համապատասխան:

18. Գործակալությունը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը նախարարության աշխատակազմ է ներկայացնում սույն ծրագրի ծախսերի նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ):

19. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

20. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգ:

21. Սահմանված կարգով գումարն ստացվելուց հետո տարածքային կենտրոնը երկու աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է անմրցունակ անձի բանկային հաշվին:

22. Տարածքային կենտրոնը կատարված վճարման փոխանցումների մասին տեղեկացնում է անմրցունակ անձին՝ վերջինիս ցանկության դեպքում հանձնելով նրան համապատասխան վճարումները հավաստող փաստաթղթերի կրկնօրինակները:

23. Սույն կարգի պահանջների խախտմամբ տրամադրված, ինչպես նաև ոչ նպատակային օգտագործված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

24. Անմրցունակ անձի կողմից ստացված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման, եթե անմրցունակ անձը՝

1) չի պահպանել գործարար ծրագրում նշված ծախսային ուղղությունների, չափերի, համամասնությունների և ձեռք բերվող հիմնական միջոցների վերաբերյալ քանակական և որակական պահանջները.

2) պետական աջակցությամբ սկսած տնտեսական գործունեությունը դադարեցրել է՝ սկսելուց հետո երկու տարվա ընթացքում:

25. Յուրաքանչյուր ծրագրի գծով նախարարության կողմից շահագործվող համապատասխան տեղեկատվական շտեմարանում ստեղծվում և վարվում է համապատասխան էլեկտրոնային գործ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

26. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով: Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությամբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների ու ծրագրում ներգրավված վարձու աշխատողների և նրանցից՝ 1 տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցրածների ու աշխատանքից ազատված վարձու աշխատողների թվի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թվին և արտահայտվում է տոկոսով: Ընդ որում, ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 17
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոն) կողմից աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպություններին (այսուհետ՝ ոչ պետական կազմակերպություններ) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորելու դեպքում աջակցություն տրամադրելու (այսուհետ՝ ծրագիր) հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրի նպատակը աշխատաշուկայում անմրցունակ անձանց (այսուհետ՝ անմրցունակ անձ) կայուն զբաղվածության ապահովումն է՝ աշխատանքի տեղավորման լրացուցիչ հնարավորությունների ընձեռման միջոցով:

3. Ծրագրի շահառուներն են անմրցունակ անձինք:

4. Անմրցունակ անձը ծրագրում կարող է ընդգրկվել մեկ անգամ:

5. Ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության առավելագույն արժեքն անմրցունակ յուրաքանչյուր անձի համար 100.000 դրամ է:

6. Եթե ծրագրում ընդգրկվելու ցանկություն ունեցող անմրցունակ անձանց թիվը գերազանցում է տարածքային կենտրոնի համար տվյալ տարվա զբաղվածության ամենամյա պետական ծրագրով նախատեսված շահառուների թիվը, ապա ծրագրում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է ավելի վաղ հաշվառվածներին՝ ըստ հաշվառման հերթականության:

7. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Տվյալ տարվա ընթացքում իրականացվելիք ծրագրի մասին տեղեկատվությունը տեղադրվում է գործակալության պաշտոնական կայքէջում և նախարարության կողմից վարվող համապատասխան տեղեկատվական շտեմարանում:

9. Տարածքային կենտրոնը տեղեկատվությունը, ինչպես նաև սույն կարգի 12-րդ կետում նշված ոչ պետական կազմակերպությունների ցանկը տեղադրում է իր գտնվելու վայրում՝ անմրցունակ անձի համար տեսանելի տեղում, իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում տեղակայված լինելու դեպքում՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում:

10. Ծրագրի իրականացման նպատակով տարածքային կենտրոնն անմրցունակ անձին տրամադրում է խորհրդատվություն աշխատաշուկայում տիրող իրավիճակի և ծրագրի իրականացման պայմանների վերաբերյալ:

11. Անմրցունակ անձանց, որոնց տարածքային կենտրոնն առնվազն երեք ամսվա ընթացքում չի տեղավորում հարմար աշխատանքի, որպես աշխատանքի տեղավորման լրացուցիչ

հնարավորություն, տրամադրում է աջակցություն համապատասխան հավաստագրի (այսուհետ՝ փոխհատուցման հավաստագիր) միջոցով՝ ոչ պետական կազմակերպությունների աշխատանքի տեղավորման ծառայություններից օգտվելու համար: Փոխհատուցման հավաստագրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը (այսուհետ՝ նախարար):

12. Փոխհատուցման հավաստագրի միջոցով փոխհատուցումը տրամադրվում է այն ոչ պետական կազմակերպություններին, որոնք նախարարության հետ համագործակցելու նպատակով ստորագրել են համագործակցության հուշագիր, հաշվառված և ներառված են նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ցանկում:

13. Անմրցունակ անձին աշխատանքի տեղավորման նպատակով ոչ պետական կազմակերպությանը տրամադրվող փոխհատուցման հավաստագրի արժեքը ոչ պետական կազմակերպությանը վճարվում է փուլերով՝

1) գումարի ընդհանուր արժեքի 5 տոկոսը փոխանցվում է ոչ պետական կազմակերպությանը՝ անմրցունակ անձի հետ աշխատանքի տեղավորման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելուց հետո:

2) գումարի ընդհանուր արժեքի 25 տոկոսը ոչ պետական կազմակերպությանն է փոխհատուցվում վերջինիս կողմից անմրցունակ անձին աշխատանքի տեղավորելուց հետո:

3) գումարի մնացած մասը՝ 70 տոկոսը, փոխանցվում է անմրցունակ անձին աշխատանքի տեղավորելուց մեկ տարի հետո, եթե այդ ընթացքում վերջինս շարունակում է աշխատել ոչ պետական կազմակերպության միջնորդությամբ, ընդ որում, աշխատանքից ազատվածների թվից հանվում է այն անձանց թիվը, որոնք աշխատանքից ազատվելուց հետո տասնօրյա ժամկետում տեղավորվել են աշխատանքի:

14. Անմրցունակ անձը, տարածքային կենտրոնից ստանալով փոխհատուցման հավաստագիրը, աշխատանքի տեղավորման ծառայություններ ստանալու նպատակով դիմում է ոչ պետական կազմակերպություն՝ ներկայացնելով փոխհատուցման հավաստագիրը:

15. Ոչ պետական կազմակերպությունը՝

1) անմրցունակ անձի դիմումն ընդունելուց հետո նրա անհատական տվյալները մուտքագրում է իր կողմից ձևավորված տեղեկատվական շտեմարան՝ դիմողի համար բացելով զբաղվածության ապահովման անհատական ծրագիր (այսուհետ՝ անհատական ծրագիր):

2) անհատական ծրագիրն իրականացնելու նպատակով անմրցունակ անձի հետ կնքում է աշխատանքի տեղավորման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ նախարարի հրամանով հաստատված օրինակելի ձևին համապատասխան:

3) պայմանագիրը կնքելուց հետո պայմանագրի և փոխհատուցման հավաստագրի արժեքի՝ սույն կարգի 13-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված 5 տոկոսը (այսուհետ՝ առաջին փուլ) ստանալու համար:

16. Ոչ պետական կազմակերպությունը, ստանալով տարածքային կենտրոնի կողմից փոխանցված գումարը, պայմանագրի հիման վրա իրականացնում է անմրցունակ անձի աշխատանքի տեղավորմանն ուղղված աշխատանքներ:

17. Անմրցունակ անձին աշխատանքի տեղավորելուց հետո ոչ պետական կազմակերպությունը տարածքային կենտրոն է ներկայացնում անմրցունակ անձի և նրան աշխատանքի ընդունած

գործատուի միջև կնքված աշխատանքային պայմանագրի (այսուհետ՝ աշխատանքային պայմանագիր) կրկնօրինակը՝ ստանալու համար փոխհատուցման հավաստագրի արժեքի՝ սույն կարգի 13-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված 25 տոկոսը (այսուհետ՝ երկրորդ փուլ):

18. Ոչ պետական կազմակերպության միջնորդությամբ տվյալ գործատուի մոտ աշխատանքի տեղավորված անմրցունակ անձի աշխատանքի մեկ տարին լրանալուց հետո ոչ պետական կազմակերպությունը փոխհատուցման հավաստագրի բնօրինակը ներկայացնում է տարածքային կենտրոն՝ փոխհատուցման հավաստագրի արժեքի՝ սույն կարգի 13-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված 70 տոկոսը (այսուհետ՝ երրորդ փուլ) ստանալու համար:

19. Տարածքային կենտրոնը համադրում է անմրցունակ անձի տվյալները նախարարության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում առկա համապատասխան տեղեկատվության հետ և պարզում ոչ պետական կազմակերպության միջնորդությամբ աշխատանքի վերցրած գործատուի մոտ անմրցունակ անձի առնվազն մեկ տարի աշխատելու փաստը:

20. Տարածքային կենտրոնները գործակալություն են ներկայացնում ծրագրի համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը՝ նախարարի հաստատած ձևին համապատասխան:

21. Գործակալությունը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը նախարարության աշխատակազմ է ներկայացնում սույն ծրագրի ծախսերի նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ):

22. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

23. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգ:

24. Սույն կարգի պահանջների խախտմամբ տրամադրված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

25. Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունը վերադարձնում է ստացած ֆինանսական միջոցները, եթե առաջին փուլում ստացված փոխհատուցումը (փոխհատուցվող գումարի ընդհանուր արժեքի 5 տոկոսը) ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում չի կարողացել տեղավորել աշխատանքի իր մոտ ուղարկված անմրցունակ անձին:

26. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. համապատասխան հավաստագրով մասնակի փոխհատուցման առաջին մասնաբաժինն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում աշխատանքի տեղավորվածների և աշխատանքի տեղավորվելուց հետո 1 տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թվի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թվին և արտահայտվում է տոկոսով: Ընդ որում, ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

Կ Ա Ր Գ

**ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոններում (այսուհետ՝ տարածքային կենտրոն) հաշվառված աշխատաշուկայում անմրցունակ անձանց (այսուհետ՝ անմրցունակ անձ) հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման (այսուհետ՝ այցելության ծախսերի փոխհատուցում) հետ կապված հարաբերությունները:

2. Այցելության ծախսերի փոխհատուցման նպատակն է անմրցունակ անձանց ակտիվացումը, ինքնուրույն աշխատանքի տեղավորվելուն նպաստելը և այդ ճանապարհով կայուն զբաղվածության ապահովումը:

**II. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

3. Այցելության ծախսերի փոխհատուցումն անմրցունակ անձանց տրամադրվում է սույն կարգով սահմանված չափերին համապատասխան՝ գործատուին այցելելու հետ կապված տրանսպորտային, ինքնակենսագրության կազմման, գործատուին պատշաճ մակարդակով ներկայանալու նպատակով իրականացվող ծախսերի որոշակի մասը փոխհատուցելու համար:

4. Այցելության ծախսերի փոխհատուցումը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Այցելության ծախսերի փոխհատուցումը տրամադրվում է ամսական կտրվածքով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած՝ թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերը համալրելու նպատակով աշխատանք փնտրող անձին տարածքային կենտրոնի կողմից տրամադրվող ուղեգրերով (այսուհետ՝ ուղեգիր) գործատուներին այցելության դեպքում:

6. Ուղեգրով գործատուին այցելության համար անմրցունակ անձին տրամադրվում է այցելության

ծախսերի փոխհատուցում՝ յուրաքանչյուր այցելության համար 2000 դրամ: Անկախ գործատուներին այցելությունների քանակից՝ յուրաքանչյուր օրացուցային ամսվա ընթացքում գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման համար տրվող գումարի չափը չի կարող գերազանցել 18000 դրամը:

7. Այցելության ծախսերի փոխհատուցման ծրագրում անմրցունակ անձը կարող է ընդգրկվել մեկ անգամ՝ առավելագույնը երեք ամիս տևողությամբ, ընդ որում, ամիսները հաշվարկվում են անընդմեջ՝ սկսած այցելության ծախսերի փոխհատուցման ծրագրում ընդգրկելու օրվանից:

8. Տարածքային կենտրոնը յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվա երրորդ աշխատանքային օրը, գործակալություն է ներկայացնում սույն կարգի 5-րդ կետում նշված ուղեգրերով նախորդ ամսվա ընթացքում գործատուին այցելած անմրցունակ անձանց ցուցակը, որում նշվում են՝

1) անունը և ազգանունը.

2) անձնագրի սերիան և համարը.

3) հանրային ծառայությունների համարանիշը, իսկ այն չունենալու դեպքում՝ սոցիալական քարտի համարը.

4) յուրաքանչյուր անմրցունակ անձի կողմից նախորդ ամսում գործատուներին այցելությունների թիվը.

5) յուրաքանչյուր անմրցունակ անձին տրամադրվելիք՝ այցելության ծախսերի փոխհատուցման չափը.

6) սույն կարգի 13-րդ կետում նշված բանկային հաշվի համարը.

7) այցելության ծախսերի փոխհատուցման ընդհանուր չափը:

9. Այն դեպքում, երբ անմրցունակ անձն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա սույն կարգի 8-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված տվյալների փոխարեն ցուցակում լրացվում է օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, իսկ փախստականի կարգավիճակ ունեցող անձի համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի սերիան ու համարը: Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անմրցունակ անձը ձեռք չի բերել (չունի) հանրային ծառայությունների համարանիշ կամ սոցիալական ապահովության քարտ, ապա սույն կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տվյալների փոխարեն ցուցակում լրացվում է բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից անմրցունակ անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը:

10. Գործակալությունը սույն կարգի 8-րդ կետով նախատեսված ցուցակները տարածքային կենտրոններից ստանալուց հետո իրականացնում է դրանցում ներառված տվյալների ուսումնասիրություն: Վրիպակների, սխալների բացակայության դեպքում գործակալությունը հաստատում է այդ ցուցակները:

11. Տարածքային կենտրոնները գործակալություն են ներկայացնում ծրագրի համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը՝ նախարարի հաստատած ձևին համապատասխան:

12. Սույն ծրագրի ֆինանսավորման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով:

13. Այցելության ծախսերի փոխհատուցման ծրագրում ընդգրկված անմրցունակ անձը բանկային

հաշիվ չունենալու դեպքում, եռօրյա ժամկետում, առևտրային բանկում բացում է բանկային և իրեն հաշվառած տարածքային կենտրոն է ներկայացնում հայտարարություն իր բանկային հաշվի տվյալների մասին:

14. Այցելության ծախսերի փոխհատուցումն անմրցունակ անձին է տրամադրվում (վճարվում) միայն անմրցունակ անձին այցելության մասին տարածքային կենտրոնի տրամադրած ուղեգրում համապատասխան գործատուի կողմից գրառում կատարելու կամ էլեկտրոնային եղանակով (տեղեկատվական շտեմարանի կամ գործակալության պաշտոնական կայքէջի կամ էլեկտրոնային փոստի միջոցով) գործակալությանը ծանուցելու դեպքում:

15. Այն դեպքում, երբ այցելության ծախսերի փոխհատուցման մեջ ընդգրկվելու իրավունք ունեցող տարածքային կենտրոնում հաշվառված անմրցունակ անձանց թիվը գերազանցում է այդ տարածքային կենտրոնի համար զբաղվածության պետական տվյալ ծրագրով նախատեսված շահառուների թվին, ապա այցելության ծախսերի փոխհատուցումը տրամադրվում է ավելի վաղ հաշվառված անմրցունակ անձանց՝ ըստ հաշվառման հերթականության:

16. Այցելության ծախսերի փոխհատուցման ծրագրով ստացված ֆինանսական միջոցները վերադարձվում են անմրցունակ անձանց կողմից՝ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով սահմանված դեպքերում:

III. ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

17. Այցելության ծախսերի փոխհատուցման մասին տեղեկատվությունն արտացոլվում է գործակալության պաշտոնական կայքէջում և նախարարության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում՝ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, այլ օրենքներին և իրավական ակտերին համապատասխան:

18. Տարածքային կենտրոնն այցելության ծախսերի փոխհատուցման մասին տեղեկատվությունը տեղադրում է իր գտնվելու վայրում՝ անմրցունակ անձանց համար տեսանելի տեղում, իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում տեղակայված լինելու դեպքում՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում:

19. Տարածքային կենտրոնը տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն՝ այցելության ծախսերի փոխհատուցման ծրագրի վերաբերյալ, իրազեկում է այցելության ծախսերի փոխհատուցման չափի, պայմանների և կարգի վերաբերյալ:

20. Այցելության ծախսերի փոխհատուցման ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. աշխատանքի տեղավորված և 1 տարվա ընթացքում աշխատանքից ազատված անձանց թվի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկվածների ընդհանուր թվին և արտահայտվում է տոկոսով: Ընդ որում, համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի**

Դ. Հարությունյան

Կ Ա Ր Գ

**ՄԵԶՈՆԱՅԻՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻԶՈՑՈՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են աշխատաշուկայում անմրցունակ, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց սեզոնային զբաղվածության խթանման միջոցով նրանց գյուղացիական տնտեսությունների աջակցության տրամադրման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրի նպատակը սեզոնային զբաղվածության ապահովման միջոցով հանրապետության առավել խոցելի և աղքատ գյուղական բնակավայրերի բնակչության սոցիալական լարվածության մեղմումն ու աշխատանքի արտադրողականության բարձրացումն է, նրանց կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը, իրավիճակից բխող մարտահրավերներին արագ արձագանքող միջոցներով՝ գյուղացիական տնտեսություններին աջակցելը:

3. Ծրագիրն առաջնահերթության կարգով իրականացվում է՝

1) գյուղացիական տնտեսության՝ բնական պատճառներով ստացած վնասների վերականգնման համար.

2) բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերում:

4. Ծրագրում ընդգրկման ենթակա են՝

1) գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող աշխատաշուկայում անմրցունակ անձը (այսուհետ՝ հող օգտագործող), որը որպես աշխատանք փնտրող հաշվառվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնում (այսուհետ՝ տարածքային կենտրոն).

2) հող օգտագործողի ընտանիքի 16-63 տարեկան գործունակություն ունեցող անդամները, որոնք որպես աշխատանք փնտրող հաշվառվել են տարածքային կենտրոնում.

3) տարածքային կենտրոնում հաշվառված աշխատանք փնտրող անձը, որը ծրագրի շրջանակներում աշխատանքային պայմանագրով՝ որպես վարձու աշխատող, կամ քաղաքացիաիրավական պայմանագրով՝ որպես որոշակի ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող, ներգրավվում է հող օգտագործողի գյուղացիական տնտեսության աշխատանքներում:

5. Հող օգտագործողին տրվում է ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն, եթե նրա՝

1) ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ստանում է ընտանեկան նպաստ.

2) ընտանիքում առկա է երկու և ավելի անչափահաս.

3) ընտանիքի անդամներից մեկը հաշմանդամություն ունեցող անձ է:

6. Հող օգտագործողների վերաբերյալ տեղեկատվությունը (գյուղական համայնքի անվանումը, հող օգտագործողի անունը, ազգանունը, (հայրանունը), անձնագրի կամ նույնականացման քարտի համարը, տարիքը, փաստացի բնակության վայրը, ընտանիքի 16-63 տարեկան գործունակ անդամների թիվը, ընտանիքի անչափահաս երեխաների թիվը, ընտանիքի հաշմանդամություն ունեցող անձանց թիվը) գործակալությանը տրամադրվում է նախարարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետարանից ստացվելուց հետո եռօրյա ժամկետում:

7. Ծրագրի առավելագույն տևողությունը 3 ամիս է:

8. Ծրագրում ընդգրկված հող օգտագործողին մեկ աշխատանքային օրվա համար նախատեսվում է վճարել չորս հազար դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքում՝ պարտադիր կուտակային վճարը: Ծրագրում ընդգրկված հող օգտագործողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար գործատու հանդիսացող հող օգտագործողին տրվում է աշխատավարձի փոխհատուցում՝ մեկ աշխատանքային օրվա համար չորս հազար դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքում՝ պարտադիր կուտակային վճարը:

9. Ծրագրի շրջանակներում աշխատանքի ներգրավված յուրաքանչյուր վարձու աշխատողի համար (բացառությամբ ծրագրում ընդգրկված հող օգտագործողի ընտանիքի անդամի), գործատու հանդիսացող հող օգտագործողին տրվում է աշխատավարձի փոխհատուցում՝ մեկ աշխատանքային օրվա համար երկու հազար դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքում՝ պարտադիր կուտակային վճարը:

10. Ծրագրի շրջանակներում ներգրավված և քաղաքացիաիրավական պայմանագրով հող օգտագործողի համար ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող անձին մատուցված ծառայությունների կամ կատարված աշխատանքների դիմաց վճարելու համար հող օգտագործողին տրվում է փոխհատուցում՝ մեկ աշխատանքային օրվա համար երկու հազար դրամ:

11. Մեկ ծրագրի արժեքը չի կարող գերազանցել երեք հարյուր հիսուն հազար դրամը:

12. Ծրագրում ընդգրկված անձանց ստացած եկամուտը ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ որպես եկամուտ չի հաշվարկվում:

13. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Գործակալության պետի կողմից ծրագրի պատասխանատու նշանակված գործակալության մասնագետները (այսուհետ՝ ծրագրի պատասխանատու) սույն կարգի 6-րդ կետով սահմանված տեղեկատվությունն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան գյուղական համայնքի ղեկավարի հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա, սույն կարգի 20-րդ կետում նշված գյուղատնտեսական աշխատանքների գծով

խորհրդատուների հետ միասին՝

1) այցելում են հող օգտագործողին՝ գյուղական համայնքի ղեկավարի կամ նրա ներկայացուցչի ուղեկցությամբ.

2) հող օգտագործողին, նրա՝ ծրագրում ընդգրկման ենթակա ընտանիքի անդամներին ծրագրի վերաբերյալ մանրամասնորեն իրազեկում են և տրամադրում խորհրդատվություն.

3) հող օգտագործողին և նրա ընտանիքի 16-63 տարեկան գործունակ անդամներին, այդ անձանց համաձայնությամբ, հաշվառում են որպես աշխատանք փնտրող.

4) հող օգտագործողի անմիջական մասնակցությամբ՝

ա. փաստագրում են մշակման ենթակա հողատարածքի գտնվելու վայրը, չափը,

բ. գնահատում են հող օգտագործողի և նրա ընտանիքի կողմից հողի մշակման կարիքներն ու հնարավորությունները,

գ. հիմք ընդունելով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման աշխատանքների չափաքանակները կազմում են գյուղացիական տնտեսության աջակցության գործարար ծրագիր (այսուհետ՝ գործարար ծրագիր)՝ երկու օրինակից, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը:

15. Գործարար ծրագրում նշվում են՝

1) գործարար ծրագրի իրականացման նպատակը.

2) կատարման ենթակա աշխատանքների պլան-ժամանակացույցը, որի ձևը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից.

3) պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ աշխատողների ընդհանուր թիվը, այդ թվում՝ հող օգտագործողի ընտանիքի անդամ չհանդիսացող վարձու աշխատողների, քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող անձանց թիվը.

4) գործարար ծրագրում ընդգրկվողների կողմից իրականացման ենթակա աշխատանքների բնույթը.

5) ամսական կտրվածքով ծրագրի մոնիթորինգ իրականացնելու նպատակով սույն կետի 2-րդ ենթակետում նշված պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքների արդյունքները, որոնք պետք է լինեն կոնկրետ և չափելի:

16. Տարածքային կենտրոնի տնօրենը հող օգտագործողի հետ երկու օրինակից կնքում է գյուղացիական տնտեսության աջակցության պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), որի անբաժանելի մաս է դառնում գործարար ծրագիրը: Պայմանագրի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը: Պայմանագրի օրինակներից մեկը տրվում է հող օգտագործողին, մյուսը մնում է տարածքային կենտրոնում:

17. Հող օգտագործողը (որպես գործատու) ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր աշխատողի հետ կնքում է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր՝ հիմք ընդունելով պայմանագրի, այդ թվում՝ դրա անբաժանելի մասը կազմող գործարար ծրագրի պայմանները: Հող օգտագործողն աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի պատճենները տրամադրում է ծրագրի պատասխանատուին՝ ծրագրով նախատեսված ֆինանսական աջակցությունն ստանալու համար:

18. Ծրագրի պատասխանատուն ամսական առնվազն 2 անգամ իրականացնում է գործարար ծրագրի կատարման ընթացքի մոնիթորինգ՝ ըստ աշխատանքների պլան-ժամանակացույցի, և

արդյունքները ներկայացնում է տարածքային կենտրոնի տնօրենին:

19. Տարածքային կենտրոնի տնօրենի կողմից գործարար ծրագրի մոնիթորինգի իրականացման ժամանակացույցը և սույն կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պլան-ժամանակացույցը ներկայացվում է նախարարություն և գործակալություն՝ մինչև ծրագրի մեկնարկը:

20. Տարածքային կենտրոնը, որպես գյուղատնտեսական աշխատանքների գծով խորհրդատու, ծրագրում ներգրավում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (այսուհետ՝ ԳԱՄԿ) աշխատողներին (այսուհետ՝ խորհրդատուներ), որոնք մասնակցում են հետևյալ աշխատանքների կատարմանը՝

1) գործարար ծրագրի կազմում.

2) սույն կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքների և (կամ) ծառայությունների կատարողականի գնահատում:

21. Խորհրդատուները գնահատում են սույն կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետով նշված պլան-ժամանակացույցով նախատեսված նախորդ ամսվա ընթացքում կատարված աշխատանքները և (կամ) մատուցված ծառայությունները և համապատասխան եզրակացությունը ներկայացնում են ծրագրի պատասխանատուին՝ մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 3-ը: Խորհրդատուների կողմից ներկայացված եզրակացության հիման վրա ծրագրի պատասխանատուն գնահատում է պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքների և (կամ) ծառայությունների կատարողականը (այսուհետ՝ կատարողական):

22. Պայմանագրի գործողությունը դադարեցվում է՝

1) կողմերի համաձայնությամբ.

2) հող օգտագործողի դիմումի համաձայն.

3) տարածքային կենտրոնի տնօրենի կողմից, եթե իրար հաջորդող մոնիթորինգի արդյունքում ծրագրում ընդգրկված անձն անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ բացակայել է՝ բացառությամբ այդ անձի հիվանդության կամ անձի և նրա հետ համատեղ ապրող կամ արյունակցական կապի մեջ գտնվող ընտանիքի անդամի հետ կապված դժբախտ պատահարի դեպքերի:

23. Պայմանագրի գործողության դադարեցմամբ դադարեցվում է պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների վճարումը հող օգտագործողին՝

1) պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ՝ սույն կարգի 22-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված դեպքերում.

2) մոնիթորինգի արդյունքում անհարգելի պատճառով ծրագրում ներգրավված անձի առաջին բացակայության փաստագրման օրվա դրությամբ՝ սույն կարգի 22-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքում:

24. Ծրագիրը կազմակերպում և իրականացնում է գործակալությունը՝ նախարարության, մարզպետարանի, գյուղական համայնքների, ԳԱՄԿ-ի մասնակցությամբ և գործուն աջակցությամբ, իսկ ծրագրի մոնիթորինգը և գնահատումն իրականացնում է նախարարությունը:

25. Գործակալությունն աջակցում է հող օգտագործողին ծրագրի շրջանակներում՝ նրա հարկային գործակալի պարտավորություններից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող հաշվապահական հաշվառման վարման, օրենքով սահմանված կարգով հարկերի հաշվարկման, վճարման, գրանցման հայտի և անձնավորված հաշվարկի ձևավորման և հարկային մարմին ներկայացման գործառույթների իրականացմանը:

26. Տարածքային կենտրոնի տնօրենը՝

1) գործակալության պետին ներկայացնում է առաջարկություններ՝ ըստ համայնքների ծրագրի պատասխանատուների վերաբերյալ.

2) ծրագրի իրականացման ընթացակարգերի, սահմանված ժամկետների և ֆինանսական խախտումների համար կրում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

III. ԾՐԱԳՐՈՎ ԿԱՌԱՏԵՍՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

27. Հող օգտագործողը պայմանագիրը կնքելուց հետո բանկային հաշիվ չունենալու դեպքում, ենթացյա ժամկետում, բացում է բանկային հաշիվ և իրեն հաշվառած տարածքային կենտրոն է ներկայացնում հայտարարություն իր բանկային հաշվի տվյալների մասին:

28. Ծրագրով նախատեսված աշխատանքներն սկսելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում հող օգտագործողին տրվում է կանխավճար՝ պայմանագրով նախատեսված գումարի 10 տոկոսի չափով:

29. Պայմանագրով նախատեսված գումարի 90 տոկոսը հող օգտագործողին վճարվում է նախորդ ամսվա համար՝ մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը, հիմք ընդունելով՝

1) ծրագրի մոնիթորինգի արդյունքները.

2) սույն կարգի 30-րդ կետում նշված՝ աշխատանքների հաճախումների մասին տեղեկանքը.

3) ծրագրի պատասխանատուի կողմից գնահատված կատարողականը:

30. Յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը հող օգտագործողը ծրագրի պատասխանատուին է ներկայացնում տեղեկանք տվյալ ամսվա ընթացքում իր մոտ սույն կարգի 16-րդ կետում նշված աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց աշխատանքի փաստացի հաճախումների և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրով մատուցված ծառայությունների կամ կատարված աշխատանքների մասին:

31. Տարածքային կենտրոնները գործակալություն են ներկայացնում ծրագրի համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը՝ նախարարի հաստատած ձևին համապատասխան:

32. Սույն ծրագրի ֆինանսավորման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով:

33. Սահմանված կարգով գումարն ստացվելուց հետո տարածքային կենտրոնը երկու աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է հող օգտագործողի բանկային հաշվին՝ նախապես Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելով եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքում՝ պարտադիր կուտակային վճարը:

34. Սույն կարգի պահանջների խախտմամբ տրամադրված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

35. Ծրագրից օգտվող գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձը վերադարձնում է ստացած ֆինանսական միջոցներն ամբողջությամբ, եթե դրանք չի օգտագործել աջակցության ծրագրով սահմանված նպատակով, չափերով և համամասնություններով և կատարված աշխատանքների կատարողականը

գնահատվել է ոչ բավարար:

IV. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

36. Տվյալ տարվա ընթացքում իրականացվելիք ծրագրի մասին տեղեկատվությունն արտացոլվում է գործակալության պաշտոնական կայքէջում և նախարարության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում՝ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, այլ օրենքներին և իրավական ակտերին համապատասխան:

37. Տարածքային կենտրոնը տեղեկատվությունը տեղադրում է իր գտնվելու վայրում՝ գործազուրկի համար տեսանելի տեղում, իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում տեղակայված լինելու դեպքում՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում:

38. Ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց տարածքային կենտրոնի կողմից տրամադրվում է խորհրդատվություն՝ ծրագրի պայմանների վերաբերյալ:

39. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 20
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՆԵՐԴՐՄԱՆ, ՎԱՐՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված՝ զբաղվածության պետական կարգավորման ոլորտի տվյալների կառավարման տեղեկատվական շտեմարանի (այսուհետ՝ համակարգ) ներդրման, վարման և շահագործման հետ կապված հարաբերությունները:

2. Համակարգի շահագործման նպատակն է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի և դրա շրջանակներում իրականացվող զբաղվածության պետական ծրագրերի (այսուհետ՝ պետական ծրագիր) կառավարման նպատակով՝ անհրաժեշտ տեղեկատվության ներմուծումը, մշակումը, պահպանումը և համակարգված ստացումը, որոշումների կայացման արդյունավետության և հուսալիության ապահովումը, աշխատաշուկայի վերլուծության և կանխատեսումների համար պահանջվող ընթացիկ ցուցանիշների արտացոլումը:

3. Համակարգը ձևավորվում է աշխատանք փնտրող անձանց զբաղվածության ապահովման անհատական ծրագրի (այսուհետ՝ անհատական էլեկտրոնային ծրագիր), գործատուների, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների կողմից ներկայացված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) իրականացմանը մասնակցող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության, պետական ծրագրերի ընթացիկ կատարողականի և մոնիթորինգի ու գնահատման ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա:

4. Համակարգն օգտվողական հարթակում ներառում է 7 օգտվողական խմբեր՝ աշխատանք փնտրողներ, գործատուներ, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպություններ, ծրագրերի իրականացմանը մասնակցող կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներ, գործակալության տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոն), այդ թվում՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների միասնական ընդունարանների աշխատողներ, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ վերահսկող):

5. Համակարգը գործառնությամբ առումով ունենալու է երկու փոխառնչվող մոդուլներ՝

1) գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների, տարածքային կենտրոնների և վերահսկողի կողմից շահագործվող մոդուլ (այսուհետ՝ հիմնական մոդուլ):

2) աշխատանք փնտրողների, գործատուների, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների կողմից շահագործվող, ինտերնետում հասանելի մոդուլ (այսուհետ՝ ինտերնետային մոդուլ): Ինտերնետային մոդուլը լիարժեք այլընտրանքային է և աշխատանք փնտրողները, գործատուները, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունները, ուսուցում և այլ պատվիրակում իրականացնող կազմակերպությունները կարող են սպասարկվել և օգտվել իրենց հասանելի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծառայություններից՝ համակարգի հիմնական մոդուլի միջոցով:

6. Սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ինտերնետային մոդուլի միջոցով աշխատանք փնտրողների, գործատուների, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների օգտվողների սպասարկումը, այդ թվում՝ աշխատանք փնտրող անձանց կողմից ինտերնետային մոդուլում նախնական գրանցումը, գործատուների և աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների գրանցումը, գործատուների և աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների կողմից առցանց նախնական խորհրդատվության ծառայությունից օգտվելը, թափուր աշխատատեղերի և աշխատանք փնտրողների վերաբերյալ տեղեկատվության ստացումն իրականացվում են համակարգում ինտերնետային մոդուլի ներդրման և գործարկման օրվան հաջորդող օրվանից: Ընդ որում, մինչև ինտերնետային մոդուլի ներդրումը և գործարկումը՝ աշխատանք փնտրող անձինք, գործատուները, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունները, ծրագրերի իրականացմանը մասնակցող կազմակերպություններն սպասարկվում են և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծառայություններից օգտվում են համակարգի հիմնական մոդուլի միջոցով:

7. Համակարգը տնօրինում և վարում է վերահսկողը:

II. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՈՒՄԸ

8. Համակարգի վարումն ու շահագործումը ներառում են՝
- 1) աշխատանք փնտրող անձի կողմից ինտերնետային մոդուլում նախնական գրանցումը.
 - 2) տարածքային կենտրոն դիմած աշխատանք փնտրող անձի անհատական էլեկտրոնային ծրագրի ձևավորումը և հետագա սպասարկումը.
 - 3) գործատուների ինտերնետային մոդուլում գրանցումը և հիմնական մոդուլում հաշվառումը.
 - 4) գործատուների հետ համագործակցության էլեկտրոնային գրանցամատյանի (այսուհետ՝ գործատուների գրանցամատյան) ձևավորումը և հետագա սպասարկումը.
 - 5) աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության էլեկտրոնային հաշվառումը.
 - 6) ծրագրերի իրականացմանը մասնակցող կազմակերպությունների էլեկտրոնային հաշվառումը.
 - 7) աշխատանք փնտրողից, գործատուից, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունից, ծրագրերի իրականացմանը մասնակցող կազմակերպությունից ստացվող համապատասխան տեղեկատվության ներառումը համակարգ.
 - 8) պետական ծրագրերի շահառուների, համագործակցող կողմերի, ժամկետների և ընթացիկ կատարողականի ցուցանիշների ներառումը համակարգ.
 - 9) անհրաժեշտ հաշվետվությունների և էլքային ձևերի կառուցման հնարավորությունը, այդ թվում՝ մոնիթորինգի ու գնահատման ցուցանիշների ինքնաշխատ եղանակով ստացումը.
 - 10) ըստ անհրաժեշտության՝ համակարգում ներառված տվյալներում փոփոխությունների կատարումը:

III. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

9. Աշխատանք փնտրող անձի կողմից ինտերնետային մոդուլում նախնական գրանցման արդյունքում աշխատանք փնտրող անձը չի համարվելու հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
10. Աշխատանք փնտրողի առցանց նախնական գրանցումը չի պարտադրում նրա կողմից հետագայում տարածքային կենտրոնում հաշվառում, բայց այն դեպքում, երբ անձը նախնական գրանցվել է, տարածքային կենտրոնում հաշվառման դեպքում համակարգի ինտերնետային մոդուլից նրա կողմից նախապես մուտքագրված անձնական տվյալներն ինքնաշխատ փոփանցվում են նաև հիմնական մոդուլ այն դեպքում, երբ անձը տարածքային կենտրոնին տրամադրում է նախնական գրանցման արդյունքում ստացած կոդը:
11. Աշխատանք փնտրող անձի կողմից ինտերնետային մոդուլում նախնական գրանցումը ներառում է՝
- 1) ինտերնետային մոդուլի միջոցով առցանց գրանցում և քայլային գործիքի միջոցով զբաղվածության պատմության, անհատական և գործնական այլ տվյալների տրամադրում՝ անհատական տեղեկատվական միջավայրի ստեղծում և, ըստ անհրաժեշտության, տվյալների թարմացում.
 - 2) սույն կետի 1-ին ենթակետի համաձայն ներկայացված աշխատուժի առաջարկի վերաբերյալ տեղեկատվությանը համապատասխան աշխատուժի համադրված պահանջարկի, ինչպես նաև

պետական ծրագրերի մասին տեղեկատվության պարբերական ստացումը՝ առցանց եղանակով:

3) առցանց հաղորդակցման միջավայր՝ գործակալության և տարածքային կենտրոնների մասնագետների կողմից նախնական խորհրդատվական և համակարգի ինտերնետային մոդուլից օգտվելու տեխնիկական աջակցություն ստանալու նպատակով:

12. Տարածքային կենտրոն դիմած աշխատանք փնտրող անձի անհատական էլեկտրոնային ծրագրի ձևավորումը և կառավարումը ներառում են՝

1) աշխատանք փնտրող անձի զբաղվածության պատմության, անհատական և գործնական այլ տվյալների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների ներմուծումը:

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված տվյալների և փաստաթղթերի հիման վրա աշխատանք փնտրող անձի զբաղվածության կարգավիճակի ամրագրումը համակարգում, աշխատաշուկայում նրա անմրցունակության որոշարկումը:

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված գործողությունների իրականացումից հետո, աշխատանք փնտրող անձի վերաբերյալ ընթացիկ տեղեկատվության և պետական ծրագրերին մասնակցության պայմանների ինքնաշխատ համադրմամբ, հնարավոր պետական ծրագրերի ցանկի ցուցադրումը:

4) փաստացի իրականացվող պետական ծրագրերի արտացոլումը և պետական ծրագրերի կատարողականի ցուցանիշների ներմուծումը:

5) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված գործողությունների իրականացումից հետո աշխատանք փնտրող անձի վերաբերյալ ընթացիկ տեղեկատվության և թափուր աշխատատեղերի պայմանների ինքնաշխատ համադրմամբ, համապատասխան թափուր աշխատատեղերի ցանկի ցուցադրումը:

6) աշխատանքի տեղավորումների և փաստացի իրականացվող պետական ծրագրերի արտացոլումը և պետական ծրագրերի կատարողականի ցուցանիշների ներմուծումը:

7) գործազուրկի կարգավիճակի կասեցումը, դադարեցումը, վերականգնումը և ինքնաշխատ եղանակով արտածումը՝ աշխատանք փնտրող անձի անհատական էլեկտրոնային ծրագրում:

13. Գործատուների ինտերնետային մոդուլում գրանցումը և հիմնական մոդուլում հաշվառումը համակարգում ունենալու է այն տրամաբանությունը, որ ինտերնետային մոդուլում գործատուի կողմից առցանց եղանակով գրանցման դեպքում գործատուն զուգահեռաբար և ինքնաշխատ նաև հաշվառվում է հիմնական մոդուլում: Գործատուն կարող է նաև հիմնական մոդուլում հաշվառվել տարածքային կենտրոն այցելության կամ զբաղվածության գործակալի կողմից գործատուին այցելության միջոցով և այս դեպքում զուգահեռաբար և ինքնաշխատ հաշվառվում է նաև ինտերնետային մոդուլում: Ինտերնետային և հիմնական մոդուլներում գրանցումը և հաշվառումը ներառում է գործատուի պատմության, անհատական և գործնական այլ տվյալների, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների ներմուծումը:

14. Համակարգում գրանցված կամ հաշվառված գործատուները հնարավորություն են ունենում ինտերնետային մոդուլի միջոցով ներկայացնելու թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն և եռակողմ ինքնաշխատ համադրման արդյունքում ստանալու աշխատանք փնտրողների ու պետական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն: Ինտերնետային մոդուլի միջոցով գործատուներին հնարավորություն է ընձեռվում նաև օգտվել առցանց նախնական

խորհրդատվության ծառայությունից:

15. Գործատուների գրանցամատյանը ներառված է համակարգի հիմնական մոդուլում, դրա ձևավորումը և հետագա սպասարկումն իրականացվում են հետևյալ գործընթացների միջոցով`

1) տարածքային կենտրոնի հետ համագործակցող գործատուների վերաբերյալ տեղեկատվությունը տարածքային կենտրոնը ներառում է համակարգի մաս կազմող` գործատուների գրանցամատյանում, իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի տեղեկատվական բազայից` առցանց եղանակով.

2) տարածքային կենտրոնը գործատուներից ստացվող թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրման ճանապարհով ներառում է համակարգ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

3) աշխատանք փնտրող անձանց աշխատանքի առաջարկ անելու և թափուր աշխատատեղը համալրելու նպատակով համակարգ ներառված թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունն ինքնաշխատ եղանակով համադրվում է համակարգ մուտքագրված աշխատանք փնտրող անձանց և պետական ծրագրերին մասնակցության չափորոշիչների տվյալների հետ.

4) համադրված թափուր աշխատատեղերի և հնարավոր պետական ծրագրերի ցանկն ինքնաշխատ եղանակով արտածվում է գործատուի գրանցամատյանում` հետագա առաջարկների համար:

16. Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության ինտերնետային մոդուլում գրանցումը և հիմնական մոդուլում հաշվառումը համակարգում ունենալու է այն տրամաբանությունը, որ ինտերնետային մոդուլում առցանց եղանակով լիարժեք գրանցման դեպքում աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունը զուգահեռաբար և ինքնաշխատ նաև հաշվառվում է հիմնական մոդուլում: Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունը կարող է նաև հիմնական մոդուլում հաշվառվել տարածքային կենտրոն այցելության կամ զբաղվածության գործակալի կողմից աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպություն այցելության միջոցով: Այս դեպքում աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունը զուգահեռաբար և ինքնաշխատ հաշվառվում է նաև հիմնական մոդուլում: Ինտերնետային և հիմնական մոդուլներում գրանցումը և հաշվառումը ներառում է աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության պատմության, անհատական և գործնական այլ տվյալների, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների ներմուծումը:

17. Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունը համակարգի ինտերնետային մոդուլի միջոցով կարող է տարածքային կենտրոններին տրամադրել, ինչպես նաև տարածքային կենտրոններից ստանալ թափուր աշխատատեղերի և աշխատանք փնտրողների վերաբերյալ տեղեկատվություն:

18. Համակարգը ներառում է նաև տարածքային կենտրոնի, գործակալության աշխատողների և վերահսկողի կողմից անհրաժեշտ հաշվետվությունների կառուցման ճկուն գործիք:

19. Համակարգում ներառվում են պետական ծրագրերի իրականացման համար սահմանված մոնիթորինգային ցուցանիշների ընթացիկ իրավիճակը և պատմությունը, որոնք հսկվում են վերահսկողի կողմից:

20. Համակարգն ամրագրում է պետական ծրագրում ներգրավված անձանց աշխատանքի տեղավորման, ինչպես նաև այդ անձանց` տվյալ աշխատատեղում աշխատանքային

հարաբերությունների դադարեցման վերաբերյալ ստացված տեղեկատվությունը:

IV. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԵԿՑՈՒՄԸ

21. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից նշանակված համակարգի շահագործման պատասխանատուն՝

1) ապահովում է համակարգի ամբողջականության պահպանումը.

2) իրականացնում է անհրաժեշտ բառարանների կազմում, նշանաբանների փոփոխություն, տվյալների անճշտությունների հայտնաբերում, հայտնաբերված անճշտությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում գործակալությանը և տարածքային կենտրոններին.

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության փոխանակումը հարակից այլ տվյալների աղբյուրների հետ.

4) վարում է համակարգի էլեկտրոնային արխիվը և ապահովում է դրա պահպանումը:

22. Համակարգի շահագործման պատասխանատուն ապահովում է համակարգում առկա բոլոր տվյալները դիտելու, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, հաշվետվություններ ստանալու (տարածքային, մարզային, հանրապետական մակարդակներով) և վերլուծություններ իրականացնելու հնարավորությամբ:

V. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

23. Համակարգի անվտանգությունն ապահովում է համակարգի շահագործման պատասխանատուն:

24. Համակարգում առկա տվյալների պաշտպանության նպատակով համակարգը վարող և շահագործող յուրաքանչյուր աշխատողի տրվում է ծածկագիր և նշանաբան, և յուրաքանչյուր մուտքն ինքնաշխատ եղանակով գրանցվում է:

25. Համակարգում առկա տվյալների արխիվացումից հետո ուղղումները և փոփոխությունները կատարվում են համակարգի շահագործման պատասխանատուի կողմից՝ գործակալության համապատասխան գրության հիման վրա:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան